

ԿԱՏԱՐԱԿՏԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Ուղեցույցը տրամադրում է կատարակտի արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել կատարկտայով մեծահասակ պացիենտների բուժման արդյունքները ներառյալ կյանքի որակը:

Մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Հայաստանի ակնաբույժների միության անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել Preferred Practice Patterns: Cataract in the Adult Eye (American Academy of Ophthalmology), ինչպես նաև Cochrane library և UpToDate էլեկտրոնային շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE) և Շոտլանդական միջկոլլեգիալ խմբի կլինիկական ուղեցույցների համացանցի (Scottish Intergollegiate Guideline Network - SIGN) ապացույցների դասակարգումը: Տեղայնացման աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի ակնաբույժների միության կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը նախատեսված է ակնաբույժների, ընտանեկան բժիշկների ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա Ուղեցույցում լուսաբանվել են կատարակտայի սահմանումների, համաճարակաբանության, ռիսկի գործոնների, ախտորոշման, կլինիկական պատկերի, մոնիտորինգի, պահպանողական և վիրահատական բուժական միջամտությունների և ելքերի հիմնահարցերը: Ընդհանուր առմամբ ձևակերպվել է 11 խորոհուրդ: Առաջարկվել են ներդրման տարբերակները և աուդիտի ցուցանիշները:

Հերկություններ

Բազմաբնագավառ մոտեցումը և ապացուցողական խորհուրդներին հետևելը կատարկտայով տառապող պացիենտների ելքերի բարելավման բանալիներն են: Տեղայնացված բուժական գործելակարգերի և ընթացակարգերի կիրառումը պետք է ձգտի հասնել պացիենտների բուժման ելքերի չափելի բարելավումների:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, Ցուցումների ուսումնասիրման, սպեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ուղեցույցեր, կադրակազմ, ներակնային ճնշում, չեկ լիստ, կայնքի որակ, արոնիկ ծիածանաթաղանթ, աչքի առաջնային հատվածի տոքսիկ համախտանիշ, ներակնային արհեստական ոսպնյակ, կերպարոռեֆրակցիոն միջամտություն

Պատասխանատու համակարգող

Մալայան Ա.

Աշխատանքային խմբի անդամներ

- Գրիգորյան Գ.
- Գրիգորյան Լ.
- Աղաբեկյան

Է.

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են շահերի բախման բացակայության մասին (հայտարարագրերը կցվում են): Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը չի ունեցել և ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համկազմողը իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոջ այնդամների ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում:

Բովանդակություն

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

Համաճարակաբանություն

Ռիսկի գործոններ

Կանխարգելում

Տեսողական ֆունկցիաները և կայնքի որակը

Վարման մարտավարություն

Ախտորոշում

Բուժում

Գրականության ցանկ

Հավելված 1.

Հապավումներ

ԱԱՀՏՀ՝ աչքի առաջնային հատվածի տոքսիկ համախտանիշ

ՊԲՎՓ՝ պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկումներ

ՕԿՏ՝ Օկուլյար կոհերենտ տոմոգրաֆիա

ՄԿԱ՝ Մակուլյար կիստոզ այտուց

ՈՍՀԲԴ՝ Ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղամիջոց

ՆԱՃ՝ Ներակնային ճնշում

ՏՆՍ՝ Տեսաներվի սկավառակ

ԷՌԳ՝ Էլեկտրոռետինոգրաֆիա

ՏԴՊ՝ տեսողական դրդված պոտենցիալներ

ՈԻՁՀ՝ Ուլտրաձայնային հետազոտություն

ՇԴ՝ Շաքարային դիաբետ

ՆԱՈ՝ Ներակնային արհեստական ոսպնյակ

ՕԲ՝ Օպտիկ բիոմետր

ԿՌՄ՝ Կերատոռեֆրակցիոն միջամտություն

ԷԿԳ՝ Էլեկտրոկարդիոգրամա

ՖԷԿ՝ Ֆակոէմուլսիֆիկացիայի

ԿԷԷ՝ Կատարակտի էքստրակապսուլյար էքստրակցիա

HEMA՝ հիդրօքսիէթիլմետակրիլատի հիմքի վրա ստեղծված սոպոլիմեր

SIGN՝ (Scottish Intergollegiate Guideline Network) Շոտլանդական միջկոլլեգիալ խմբի կլինիկական ուղեցույցերի համացանց

GRADE (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation)՝ Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը

ASCRS (American society of cataract and refractive surgery)՝ Կատարակտի և ռեֆրակտիվ վիրաբուժության ամերիկյան միություն

NEIVFQ (National Eye Institute Visual Function Questionnaire)՝ Աչքի ազգային ինստիտուտի տեսողական ֆունկցիայի հարցաշար

Cataract PORT (The Cataract Patient Outcomes Research Team)՝ Կատարակտայով պացիենտների ելքերի հետազոտական թիմ

DSEK (Descemet's stripping endothelial keratoplasty)՝ Դեսցեմետի էնդոտելիալ ստրիպինգ կերատոպլաստիկա

Նախաբան

Կատարակտը դա հարաճող, քրոնիկ տարիքային հիվանդություն է, որն ախտահարում է մեծամասնությամբ 50 անց մարդկանց: Կատարակտի վիրաբուժությունը բժշկության պատմության մեջ ամենաբարձր արդյունավետություն ունեցող բուժման մեթոդներից է: Առանց վիրաբուժական միջամտության

կատարակտով պացիենտների տեսողական ֆունկցիաները, ինչպես նաև ֆունկցիոնալ հնարավորությունները աստիճանաբար նվազում են: Կատարակտի ժամանակակից վիրահատությունից հետո պացիենտները շատ արագ ապաքինվում են, ձեռք են բերում բավականին լավ տեսողություն, եթե իհարկե նրանց մոտ տեսողության նվազեցումը պայմանավորված է եղել միայն կատարակտի առկայությամբ, ինչպես նաև հնարավորություն ունեն վիրահատությունից հետո կարճ ժամանակ անց վերադարձալ իրենց բնականոն կյանքին: Ստորև բերված են կատարակտով պացիենտներին ակնաբուժական օգնություն ցուցաբերելու գլխավոր դրույթներն ու խորհուրդները: Սույն ուղեցույցի կլինիկական նպատակներն են.

- Լուսաբանել կատարակտի ախտորոշման հիմնահարցերը
- Գնահատել կատարակտի ազդեցությունը տեսողական ֆունկցիաների, ֆունկցիոնալ հնարավորությունների և պացիենտի կյանքի որակի վրա
- Տեղեկացնել պացիենտին տեսողության և ֆունկցիոնալ ակտիվության վրա կատարակտի ազդեցության , կլինիկական ընթացքի մասին , վիրաբուժության առավելությունների ու ռիսկերի և բուժման այլընտրանքային մեթոդների մասին այնպես, որ նա ինֆորմացված ընտրության հնարավորություն ունենա
- պացիենտի հետ համատեղ բուժման էֆեկտիվության կրիտերիաների մշակում
- ֆունկցիոնալ բարելավման հավանականությունների դեպքերում պացիենտի համաձայնությամբ որոշել վիրաբուժական միջամտությունների ցուցումները

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանությունը

Սույն ուղեցույցը մշակվել է Հայաստանի ակնաբույժների միության անդամների կողմից: Տեղայնացման սկզբնաղբյուրներ է հանդիսացել : Օգտագործվել են նաև Cochrane library, MEDLINE, և UpToDate առցանց տվյալների բազաները: Բանալի բառերի օգնությամբ կատարվել է բազմաբնագավառ, համակարգված գրականության որոնում (2008-2016թթ.) հավելյալ կատարելով

համապատասխան հրապարակումների գրականության ցանկերի սկրինինգ: Յուրաքանչյուր որոնողական ռազմավարության նպատակն էր հայտնաբերել պատահական բաշխմամբ վերահսկավող փորձարկումներ (ՊԲՎՓ), ոչ-ՊԲՎԹ և համակարգային վերանայումներ, որոնք անդրադառնում են որոշակի գիտական հարցադրումներին:

Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացած ուղեցույցում հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE) և Շոտլանդական միջկոլլեգիալ խմբի կլինիկական ուղեցույցների համացանցի (Scottish Intercollegiate Guideline Network - SIGN) ապացույցների դասակարգումը:

Տեղայնացման աշխատանքները իրականացվել են ըստ ADAPTE մեթոդաբանության՝ միջմասնագիտական աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահար շփումների միջոցով: Ուղեցույցի բոլոր դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի բոլոր անդամների կոնսենսուս:

Փաստաթուղթը նախատեսված է ակնաբույժների, ընտանեկան բժիշկների և առողջապահության կազմակերպիչների համար: Սույն Ուղեցույցը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման Հայաստանի ակնաբույժների միության անդամների կողմից յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

1. Ցուցումների առկայության դեպքում խորհուրդ է տրվում իրականացնել կատարակտի վիրաբուժական բուժում, քանի որ ապացուցված է վերջինիս արդյունավետությունը կյանքի որակի բարձրացման առումով

(համառ առաջարկ, ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ կատարակտի էքստրակցիան բավականին լավացնում է պացիենտների ամենօրյա ակտիվությունը[4-7]: Այն իր մեջ ներառում է քայլել, մեքենա վարել, պրոֆեսիոնալ գործունեությունը պահպանել, անձնական կարիքների հոգալ և խնամք, պացիենտի հոբբի, լավացնել սոցիալական կյանքի մեջ ներգրավվածությունը, ինչպես նաև քչացնել անհանգստությունը ռեֆրակցիայի վիճակի վերաբերյալ[5,8,13]: Գիտական գրականությունում կան ապացույցներ այն մասին, որ կատարակտի էքստրակցիայից հետո նվազում են վնասվածքների և ավտովթարների ռիսկերը, լավանում է հոգեկան առողջությունը և բարձրանում է ինքնագնահատականը[14-20]: Կյանքի որակի այդպիսի լավացումը չի կարող կանխատեսվել կամ գնահատվել միայն ըստ Սնելենի տեսողության սրության չափման հիման վրա, քանի որ խնդիրները կապված շողացումների հանդեպ զգայունության, գունազգացողության, կոնտրաստային զգայունության, արբերացիաների, քինոկոպար տեսողության հետ, ընդհանուր առմամբ անմիջապես ազդում են տեսողական ֆունկցիաների վրա[8,9,21-26]:

2. Ցուցումների առկայության դեպքում խորհուրդ է տրվում իրականացնել կատարակտի վիրաբուժական բուժում, քանի որ ապացուցված է նրա առավելությունը այլ տեսակի բուժումների նկատմամբ

(համառ առաջարկ, ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Սկսած 1960թ.-ի վերջից մինչ օրս կատարակտի վիրահատության պրոգրեսը թույլ է տվել լավացնել անվտանգությունը և լավացնել արդյունքները: Ներկայումս կատարակտի վիրահատության էկոնոմիկ արժեքը (benefit value) կազմում է \$95000 [27], ինչը բավականին բարձրացնում է վիրահատական բուժման արժեքը:

3. Վիրաբուժական բուժման որոշումը պետք է կայացվի հիմնվելով հետևյալ գործոնների վրա. տեսողության սրություն, տեսողական ֆունկցիաների

խանգարում, ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացման հնարավորություն

(համառ առաջարկ,ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Չկա հետազոտության հստակ մեթոդ,որը կարող է որոշել պացիենտի կատարակտի ազդեցությունը նրա ֆունկցիոնալ հնարավորությունների և տեսողական ֆունկցիաների վրա[28]:Հետևաբար չկա մի մեթոդ,որը կարող է կատարակտի վիրաբուժության համար սահմանային վիճակ սահմանել:Չնայած նրան,որ երկար ժամանակի ընթացքում տեսողության սրության հետազոտման տարբեր մեթոդներ դիտարկվում են վիրաբուժության համար ինչպես որոշիչ ֆակտոր պացիենտների ընտրության համար,վիրաբուժական բուժման անհրաժեշտության որոշումը չպետք է հիմնված լինի միայն այդ տվյալների վրա[4,23]:Օրինակ ըստ Սնելենի համեմատաբար բարձր տեսողության սրությունով պացիենտների մոտ,կատարակտի սկզբնական շրջաններում վիրաբուժական բուժումը ուղեկցվում է լավ ֆունկցիոնալ արդյունքներով [29]: Պարզվել է ,որ տեսողական ֆունկցիաների և առօրյա ակտիվության ստանդարտիզացված գնահատումը կորելացվում է սպասվող հետվիրահատական լավացումների և պացիենտի բավարարվածության հետ:Որոշ նման թեստեր անցել են հավաստիության ստուգում և նրանց վերջին մոդիֆիկացիաները հասանելի են կլինիկական պրակտիկայում ներդրելու համար[4,23,24,30,33]:

4. Կատարակտի վիրաբուժական միջամտություն պետք է իրականացվի ըստ ցուցումների

(համառ առաջարկ,ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Կատարակտի էքստրակցիան ԱՄՆ-ում հանդիսանում է ամենից հաճախ իրականացվող վիրահատական միջամտություններից: Մի քանի հետազոտություններ ցույց են տվել,որ Միացյալ Նահանգներում կատարակտի

վիրահատությունների բացարձակ մեծամասնությունը իրականացվել են ըստ ցուցումների և համարվում են տեղին [34]:

5.Նախքան վիրահատությունը կարևոր է բացառել ատոնիկ ծիածանաթաղանթի առկայությունը, ինչը հաճախ հանդիպում է a-անտագոնիստներ ընդունող անձանց մոտ:Առկայության դեպքում իրականացնել վիսկոմիդրիազ կամ կիրառել հատուկ իրիս-ռետրակտորներ,որոնք ավելի նախընտրելի են քան բբի մեխանիկական ռետրակցիան և սֆինկտերոտոմիան

(համառ առաջարկ,ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Ռիզիկ ծիածանաթաղանթի սինդրոմը կապված է ներվիրահատական բարդությունների բարձր հաճախականության հետ,հատկապես, եթե այն չէր բացահայտվել մինչև վիրահատությունը[35-39]:Բբի մեխանիկական ռետրացիան և սֆինկտերոտոմիան էֆեկտիվ չեն,խորհուրդ է տրվում դեղերի կոմբինացված կամ ինքնուրույն կիրառում,ինչպիսին է էպինեֆրինի ներխցիկային ներմուծումը,վիսկոմիդրիազ և հատուկ իրիս-ռետրակտորներ[35-37]:Պացիենտներին անհրաժեշտ է հարցնել a-անտագոնիստների (հատկապես Տամսուլոզինի) ներկայումս կամ նախկինում օգտագործման մասին:Վերջինս ավելի շատ է կապված ատոնիկ ծիածանաթաղանթի հետ, քան ոչ սելեկտիվ a-անտագոնիստները [40]:

6.Անհրաժեշտ է հիշել,որ կատարակտի էքստրակցիան թույլ է տալիս նվազեցնել ներակնային ճնշումը

(համառ առաջարկ,ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Տարբեր հեղինակների տվյալները վկայում են այն մասին,որ կատարակտի ֆակոէմուլսիֆիկացիան նպաստում է ՆԱՃ նվազեցմանը առանց զուգակցվող գլաուկոմայի[41-44]: Նաև կատարակտի էքստրակցիան կարող է զուգակցող

փականկյուն գլաուկոմայով պացիենտների մոտ նպաստել ՆԱՃ ստաբիլիզացիային[45-47],այն դեպքում,երբ բացանկյուն գլաուկոմայի առկայության դեպքում հետվիրահատական հիպոտենզիվ էֆեկտը կարող է արտահայտված չլինել [45,48]:

7.Անհրաժեշտ է հիշել,որ ընդհանուր առմամբ բնակչության մոտ առկա է հակաբիոտիկների նկատմամբ կայունության բարձր աստիճան

(համառ առաջարկ,ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Հետվիրահատական էնդոֆթալմիտների ամենահաճախակի հարուցիչները ստաֆիլակոկների շտամերն են[49-51],իսկ նրանց աճող կայունությունը հակաբիոտիկների նկատմամբ մեր օրերում իրենից ներկայացնում է լուրջ խնդիր[52-55]:Սկսած պենիցիլինի հանդեպ կայունության զարգացումից,տարբեր հակաբիոտիկների հանդեպ ռեզիստենտականությունը անշեղորեն աճում է,ներառյալ ակնաբուժության մեջ օգտագործվող բոլոր ֆտորքինոլոնները[52-55]:Այդ մուլտիռեզիստենտ շտամները դարձել են այնքան տարածված,որ առկա են ԱՄՆ-ում վիրահատակ բուժման գնացող պացիենտների մեծամասնության մոտ[56]:

8.Անհրաժեշտ է նախորոք ձևակերպել հակաբիոտիկների դոզավորումը և կիրառման եղանակը,որպեսզի աչքում,անմիջապես վիրահատությունից հետո լինի դեղի բարձր կոնցենտրացիա

(համառ առաջարկ,ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Չնայած որ,հակաբիոտիկները տեղային կիրառման դեպքում կարող են հասնել ներակնային թերապևտիկ կոնցենտրացիայի շատ բակտերիաների հանդեպ,միայն վիրահատության վերջում դրանց ներխցիկային կիրառումը կարող է երաշխավորել սահմանայինից բարձր կոնցենտրացիա երկար ժամանակվա ընթացում[57]:Գնալով ավելի շատ տվյալներ են ապացուցում այս մեթոդի էֆեկտիվությունը[58-60]:Տեղային

կաթիլների կիրառումը կարելի է համատեղել ներխցիկային ներմուծման հետ,սակայն միայն ինստիյացիաների դեպքում այն պետք է իրականացնել հաճախակի և սկսել հենց վիրահատական օրվանից մինչև հաջորդ օրը[61-65]:Քիչ ապացույցներ կան այն մասին,որ հակաբիոտիկների ենթակոնյունկտիվալ ներարկումը իր էֆեկտիվությամբ հավասար է ներխցիկային ներմուծմանը կամ կաթիլների օգտագործմանը [66]:

9. Ակնաբույժը միշտ պետք է հիշի աչքի առաջային հատվածի տոքսիկ սինդրոմի զարգացման հավանականության մասին

(համառ առաջարկ,ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Կատարակտի կապակցությամբ վիրահատությունների մեծ շարքի հետազոտությունների տվյալներով ($n=26,408$),բացահայտվել է,որ աչքի առաջնային հատվածի տոքսիկ սինդրոմը (ԱԱՀՏՀ) զարգանում է 0,22% դեպքերում[67]: ԱԱՀՏՀ-ի զարգացման առավել տարածված պատճառներն են վիրաբուժական գործիքների անբավարար մաքրելն ու ստերիլիզացիան,օրինակ ֆակոէմուլսիֆիկացիայի կամ իրիգացիա/ասպիրացիայի բռնակների անբավարար լվացումը,ՈԻՁ վաննայի,լվացող նյութերի և օգտագործվող ֆերմենտային նյութերի անհամապատասխան կիրառումը [68]:

10. Ինտակտ կապսուլյար պարկի բացակայության դեպքում անհրաժեշտ է որոշել,հանդիսանում է արդյոք ՆԱՌ-ի դիզայնը և բեկման ուժը համապատասխան կապսուլյար պարկի կամ ցիլիար ակոս ինպլանտացիայի համար

(համառ առաջարկ,ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Ցիլիար ակոս ինպլանտացիայի համար ՆԱՌ-ի ընդհանուր բնութագրերն են հանդիսանում ՆԱՌ-ի երկարությունը հաշվի առնելով հապտիկ էլեմենտների թեքությունը, օպտիկ հատվածի առաջային մակերեսի ոչ սուր եզրը[69]:

Պահեստային ՆԱՌ(ցիլիար ակոսում ֆիքսելու համար),համապատասխան բեկման ուժով վիրահատական ցանկացած միջամտության ժամանակ պետք է լինեն հասանելի[69-71]:Հաշվի առնելով օպտիկ մասի առաջնային դիրքը,ցիլիար ակոս ինպլանտացիայի համար ՆԱՌ-ի բեկման ուժը պետք է նվազված լինի,համեմատած ինտրակապսուլյար ինպլանտացիայի ՆԱՌ-ի բեկման ուժի հետ[72-73]:

ՆԱՌ-ի օպտիկ մասի սեղմումը կապսուլոռեքսիսում նվազեցնում է նրա ստաբիլության և օպտիկայի կենտրոնացման կախվածությունը նրա հապտիկ մասի էլեմենտների երկարությունից [74],այն դեպքում,երբ արտակապսուլյար ֆիքսացիայի ժամանակ մեծանում է դեցենտրացիայի և ՆԱՌ-ի ռիսկը:Անհրաժեշտ է նախատեսել մուլտիֆոկալ ՆԱՌ-ի օգտագործման հնարավորությունը և հաշվի առնել այն, որ պետք է ինպլանտացվի բացասական աբերացիայով սֆերիկ ՆԱՌ [75,76]:

11. Խորհուրդ է տրվում օգտագործել անվտանգության ընթացակարգեր, որպեսզի կանխվի հնարավոր վիրահատական միջամտությունը <<ոչ ճիշտ աչքին>>

(համառ առաջարկ,ապացույցի չափավոր աստիճան)

Հիմնավորում

Արտացոլում է էտապներ, որոնք իրականացվում են վիրահատությունից օրեր առաջ, վիրահատության օրը և երբ կատարվում է նախավիրահատական հաշվարկը,որպեսզի մինիմումի հասցվի կանխվող վիրահատական սխալների հաճախականությունը,ինչպիսիք են միջամտության կողմ(օրինակ <<ոչ ճիշտ աչքի>>) կամ վիրաբուժական միջամտությունը(օրինակ ոչ ճիշտ ՆԱՌ-ի ինպլանտացիա) [77-82]:

Համաճարակաբանություն

Կատարակտը ամբողջ աշխարհում հանդիսանում է կուրության առաջատար պատճառ և շարունակում է մնալ կուրության հիմնական պատճառներից մեկը Ամերիկայի Միացյալ Նահանգներում, կատարակտին բաժին է ընկնում 40 տարեկանից բարձր մարդկանց մոտ տեսողության խանգարումների մոտ 50 %-ը [80]: Կատարակտը հանդիսանում է վերականգնվող կուրության գլխավոր պատճառ 40 տարեկանից բարձր աֆրիկյան ծագում ունեցող ամերիկացիների մոտ [83,84]: Հայաստանում 2014 թ.-ին գրանվել են 21743 գլաուկոմայով հիվանդ պացիենտներ, որոնցից 7984 առաջին անգամ ախտորոշված: 2015 թ.-ին գրանվել են 21567 պացիենտներ, որոնցից 7749 առաջին անգամ ախտորոշված: 2016 թ.-ին գրանվել են 21616 պացիենտներ, որոնցից 7539 առաջին անգամ ախտորոշված:

Գոյություն ունի կատարակտի մի քանի տեսակ. կորիզային, կեղևային, ճառագայթանման, սուբկապսուլյար (առաջային և հետին) և խառը: Յուրաքանչյուր տեսակին բնորոշ են որոշակի անատոմիական առանձնահատկություններ, պաթոլոգիկ փոփոխություններ և զարգացման ռիսկի գործոններ: Գոյություն ունեն կատարակտի արտահայտվածության աստիճանի մի քանի դասակարգումներ և բնորոշումներ [85-89]: Կորիզային կատարակտի դեպքում պղտորությունը կամ գույնի փոփոխությունը գտնվում է ոսպնյակի կենտրոնական հատվածում, ինչը նպաստում է տեսողության իջեցմանը: Կորիզային կատարակտի տարբեր տիպեր կարող են ուղեկցվել կորիզի պղտորությամբ (կորիզի ներքին շերտերի սպիտակամոխրագույն գունավորում), դարչնագույն կորիզի առկայությամբ և երկու տիպերի զուգակցմամբ [90]: Կորիզային կատարակտան որպեսզ կանոն պրոգրեսիվում է դանդաղ և ազդում է առավելապես հեռու քան մոտիկ տեսողության վրա: Ուշացած դեպքերում ոսպնյակը դառնում է դարչնագույն և ոչ թափանցիկ:

Կեղևվային կատարակտայի դեպքում պղտորությունը տեղակայվում է կենտրոնական և պերիֆերիկ կեղևային շերտերում և երբեմն լավ երևում է ռետրոիլյումինացիայի և սկիասկոպիայի ժամանակ: Կորիզային կատարակտով պացիենտները սովորաբար գանգատվում են լույսի նկատմամբ զգայունությունից և

բիկներից՝ լույսի աղբյուրի շուրջ:Երբ կորտիկալ շերտերը դառնում են սպիտակ և կորցնում են թափանցիկությունը, կատարակտան կոչվում է հասուն կեղևային:

Հետին սուբկապսուլյար կատարակտը կարող է բերել տեսողության զգալի խանգարումների, եթե պղտորությունը տեղակայվում է օպտիկական առանցքի սահմաններում:Երիտասարդ պացիենտների մոտ ավելի հաճախ ախտորոշվում է հետին սուբկապսուլյար քան կորիզային կամ կեղևային կատարակտը: Պացիենտների հաճախ գանգատվում են բիկներից , լուսապսակներից լուսավորման աղբյուրների շուրջ և պայծառ լուսավորման ժամանակ ցածր տեսողությունից,նաև նկատվում է տեսողության նվազում մոտ տարածության վրա, ի տարբերություն հեռվի:Երկու պոպուլյացիոն հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ վերը նշված երեք տեսակի կատարակտներից հետին սուբկապսուլյարը բնորոշվում է վիրաբույական բուժման ամենաբարձր հաճախականության ցուցանիշով [91,92]:

Տարեց մարդկանց շրջանում (միջին տարիքը 79 տարեկան),ովքեր վիրահատվել են կատարակտի կապացությամբ ,ամենահճախը հանդիպել է կորիզային կատարակտան [93]:

Կատարակն ախտահարում է ավելի քան 22 միլիոն ամերիկացիների 40 տարեկանում և բարձր կամ ամեն 6-րդ մարդուն այդ տարիքային խմբում:80-տարեկանին մոտ բոլոր ամերիկացիների 50 %-ի մոտ առկա է կատարակտ [94]:

Աչքի հիվանդությունների հաճախականությունը ուսումնասիրող հետազոտական խումբը (Eye Disease Prevalence Research Group) հիմնվելով ամերիկյան բնակչության հաշվառման վրա,կանխատեսում է 2020 թ-ին կատարակտով մարդկանց քանակի ավելացում 50 %-ով [83]:

Տարբեր հետազոտությունների տվյալների համաձայն կատարակտի տարբեր տիպերի տարածվածությունը տատանվում է կախված ռասսայական պատկանելությունից: Այսպես Salisbury Eye Evaluation Study տվյալներով Աֆրիկյան ծագման ամերիկացիների մոտ 4 անգամ ավելի հաճախ հանդիպում են կեղևային կատարակտներ,իսկ ևվրոպական ծագում ունեցող ամերիկացիների մոտ

գերակշռում է կորիզային և հետին սուբկապսուլյար պղտորումների առկայությունը [95]: Los Angeles Latino Eye Study տվյալներով 40 տարեկան և բարձր մարդկանց մոտ ամենից հաճախ հանդիպում են կեղևային շերտերի պղտորումներ [96]:

Ռիսկի գործոններ

Ստորև բերված են կատարակտի զարգացման հետ կապված բազմաթիվ ռիսկի գործոններ (Տես՝ Աղյուսակ 1.): Սրանցից ամենատարածվածն է շաքարային դիաբետը, տեղային, համակարգային և ինհալացիոն կորտիկոստերոիդների երկարատև օգտագործումը և նախորդող ներակնային վիրաբուժությունը [97-109]:

Աղյուսակ 1.

Կատարակտի զարգացման բարձր ռիսկի գործոնները

Կատարակտի տիպ	Ասոցացված ռիսկի գործոններ	Հետազոտման տիպ	Ռիսկ
Ենթատիպեր, որոնք նշված չեն հետազոտությունների ի մեջ	Ասպիրինի ընդունում	ՊԲՎՓ	Ընդունման առավելությունների Ապացույցներ չկան
		Օբսերվացիոն	Բարձր ռիսկ
	Շաքարային դիաբետ	Օբսերվացիոն	Բարձր ռիսկ
	Ինհալացիոն կորտիկոստերոիդների կիրառում	Դեպք-ստուգիչ	Բարձր ռիսկ=կամ >40 տարեկան հիվ. Մոտ
		Դեպք-ստուգիչ	Բարձր ռիսկ=կամ >65 տարեկան հիվ.

			Մոտ
		Դեպք-Կոնտրոլ	Բարձր ռիսկ=կամ >70 տարեկան հիվ. Մոտ
	Կորտիկոստերոիդներ ը նազալ կիրառում	Դեպք-ստուգիչ	Բարձր ռիսկ չկա
	Իոնիզացնող ճառագայթում (ցածր և բարձր դոզաներ)	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Ծխելը	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
Կեղևային	Շաքարային դիաբետ	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Ժառանգականություն	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Զարկերակային հիպերտենզիա	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Իոնիզացնող ճառագայթում (ցածր և բարձր դոզաներ)	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Միոպիա(> 1.0d)	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Ճարպակալում	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Համակարգային կորտիկոստերոիդներ	Դիտարկումայի	Բարձր ռիսկ

	ի կիրառում	ն	
	В-սպեկտրի ՈԽՄ- ճառագայթների ազդեցություն	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
Կորիզային	Շաքարային դիաբետ	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Ժառանգականություն	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Զարկերակային հիպերտենզիա	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ տեղային կամ համակարգային բետաբլոկատորների ի կիրառման ժամանակ
	Նախորդող վիրտեկտոմիա	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Ծխելը	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	В-սպեկտրի ՈԽՄ- ճառագայթների ազդեցություն	Դեպք- ստուգիչ	Բարձր ռիսկ
Հետին կապսուլյար	Ինհալացիոն կորտիկոստերոիդներ ի կիրառում	Պոպուլյացիոն լայնածիգ հետազոտություն ն	Բարձր ռիսկ=կամ >40 տարեկան հիվ. Մոտ
	Իոնիզացնող	Դիտարկումայի	Բարձր ռիսկ

	ճառագայթում (ցածր և բարձր դոզաներ)	ն	
	Ճարպակալում	Դիտարկումայի ն	Բարձր ռիսկ
	Աչքի տրավմաներ	Լայնաձիգ	Բարձր ռիսկ
	Նախորդող վիրտեկտոմիա	Օբսերվացիոն	Բարձր ռիսկ
	Ցանցենու պիգմենտային դեգեներացիա	Դեպքերի սերիա	Բարձր ռիսկ
	Կորտիկոստերոիդնե րի տեղային կիրառում	Դեպքերի սերիա	Բարձր ռիսկ
	Համակարգային կորտիկոստերոիդներ ի կիրառում	Օբսերվացիոն	Բարձր ռիսկ
Խառը	Նախորդող վիրտեկտոմիա	Օբսերվացիոն	Բարձր ռիսկ
	Ծխելը	Օբսերվացիոն	Բարձր ռիսկ
	Յ-սպեկտրի ՈՒՄ- ճառագայթների ազդեցություն	Օբսերվացիոն	Բարձր ռիսկ

Բոլոր հետազոտությունները, որոնք կատարվել են դիսկի գործոնները որոշելու համար եղել են դիտարկումային [97,110]

Կատարակտի բնական ընթացք

Կատարակտի հասունացումը անկանխատեսելի և փոփոխական պրոցես է և որոշակի ձևով կախված է տեսակից: Ոսպնյակի թափանցիկությունը կարող է խանգարվել ցանկացած հատվածում: Տարիքի հետ ավելանում է զանգվածը և ոսպնյակի հաստությունը: Ոսպնյակի թելիկների շարունակական աճն ուղեկցվում է կորիզի խտացմամբ և ճնշմամբ, այսպես կոչված սկլերոզով: Արդյունքում ոսպնյակային պրոտեինները ենթարկվում են քիմիական փոփոխությունների և սոսնձվում են, աստիճանաբար ստանալով դեղին կամ գորշավույն գույն և փոխում են ոսպնյակի ռեֆրակցիոն ցուցանիշները և թափանցիկությունը: Ոսպնյակի դեղնումը և կորիզի սկլերոզը համարվում են օրգանիզմի ծերացման բնական գործոնթացքներ: Ոսպնյակի պոլտորումների և տեսողական ֆունկցիաների վատացման ի հայտ գալուն պես, հիվանդությունը զարգանում է առանց առողջացման շանսերի: Barbados Eye Studies-ի համայայն կատարակտին նախորդող ոսպնյակի պոլտորումով պացիենտների մոտ կատարակտի պրոգրեսիվման հաճախականությունը կազմել է՝ 22% կեղևային կատարակտի, 17.8% կորիզափին կատարակտի և 25,8% հետին պատիճային կատարակտի դեպքում [111]: Մեկ այլ Melbourne Visual Impairment Project և Longitudinal Study of Cataract հետազոտության համաձայն՝ 14,3% և 16.2% կեղևային, 19,3% և 45.8% կորիզափին և 20% և 55.1% հետին կապսուլյար կատարակտների դեպքում [112-114]:

Կանխարգելում

Որոշ հետազոտությունների արդյունքներ ցույց են տվել կապը ծխելու և ոսպնյակի սկլերոզի միջև, և մատնանշում են չափաբաժին-կախյալ էֆեկտ [115-124]: Հետազոտությունների արդյունքները վկայում են կատարակտի զարգացման դիսկի նվազեցումը ծխելը թողած անձանց մոտ (նախկինում ծխողների), համեմատած

նրանց, ովքեր շարունակում են ծխել, ինչը ապացուցում է ծխելը դադարեցման օգտակարություն [115,118,124,125]: Այսպիսով, ծխելը դադարեցումը կարելի է համարել ողջամիտ կանխարգելիչ միջոց, որն էլ պետք է խորհուրդ տալ պացիենտին: Կուտակվող ազդեցությունը սպեկտրի B UV-ճառագայթների ամբողջ կյանքի ընթացքում նույնպես կարող է առաջացնել ոսպնյակի պղտորում [126-131], ուստի արեւային ակնոցների կրելը նույնպես համարվում է ողջամիտ կանխարգելիչ միջոց [132]: Սննդային հավելումների և վիտամինների ութ ռանդոմիզացված վերահսկվող փորձարկումները չեն բացահայտել էական ազդեցություն կատարակտի զարգացումը դանդաղեցման պրոցեսի վրա [133-141,168]: Այլ հետազոտության արդյունքներ նույնպես համոզիչ չեին, քանի որ վիճակագրորեն սննդային հավելումների հավաստի պաշտպանիչ ազդեցություն վիտամիններ C և E-ով և բետա կարոտինով բացահայտվել է ԱՄՆ-ում հետազոտողների խմբում եւ բացակայել է Մեծ Բրիտանիայի հետազոտողների խմբում [142]: Պոլիվիտամինների և հանքային հավելումների էֆեկտիվության 9-ամյա ռանդոմիզացված հետազոտությունների դիտարկումը ցույց է տվել կորիզային կատարակտի նվազեցում,բայց հետին սուբկապսուլյար կատարակտի քանակի ավելացում [143]: Չինաստանի աղքատ գյուղական բնակչության շրջանում ուսումնասիրությունը ցույց է տվել սննդային հավելումների դրական ազդեցությունը [144]: Երեք վերջին հետազոտություններում գնահատվել է ստատինների էֆեկտիվությունը կատարակտի պրոֆիլակտիկայում[169]: Beaver Dam Study հեղինակները եկել են այն եզրահանգմանը,որ ստատինների օգտագործումը կարող է նվազեցնել կատարակտի զարգացումը[170,171]:

Տեղային,ինհայացիոն կամ ընդհանուր կորտիկոստերոիդների երկարատև օգտագործումը մեծացնում է կատարատի զարգացման վտանգը[98-102]:

Շաքարային դիաբետով պացիենտները գտնում են բարձր ռիսկի գոտում[103-105] և 2-րդ տիպ շաքարային դիաբետի պրոֆիլակտիկան և ադեկվատ թերապիան զգալի նվազեցնում են կատարակտի զարգացման հավանականությունը:

Տեսողական ֆունկցիաները և կայնքի որակը

Տեսողական ֆունկցիաների բազմակոմպոնենտությունը ներառում է կենտրոնական տեսողություն մոտիկ,միջին և հեռու տարածությունների վրա,պերիֆերիկ տեսողություն,տեսողական որոնում,բինոկուլյար տեսողություն,ընկալման խորություն,գունաընկալում,ադապտացիա և տեսողական ընկալման մշակման արագություն[8,21,22]:Առօրյա գործունեությունը պահանջում է տեսողական ֆունկցիաների տարբեր կոմպոնենտներ[9,23,26]: Պացիենտի կյանքի որակի և տեսողական ֆունկցիաների բարելավումը կատարակտի բուժման ամենակարևոր պահանջն է: Որոշ օբսերվացիոն հետազոտություններ ցույց են տվել, որ տեսողական ֆունկցիաները մեծ դեր են խաղում մարդկանց ֆիզիկական ակտիվության և բարեկեցության գործում[4-7,5,8-13,14-17]:Գործունյա տարիքում տեսողական ֆունկցիաների նվազեցումը նշանակում է ֆիզիկական ակտիվության և ինքնուրույնության սահմանափակում[12,172-173,174,175]:Կատարակտի վիրաբուժությունը կարող է նպաստել հոգեկան առողջության վերականգնմանը [176] և անքնության վերացմանը[177,178]:Տեսողական ֆունկցիաների վատացումը կապված է նաև ընկնելու հավանականության բարձրացման և տարբեր աստիճանի վնասվածքների և կոտրվածքների հետ [18-19],ինչպես նաև կոնքազդրային հոդի վզիկի կոտրվածքի հետ [20,179]:Տեսողության կորուստը և դրա հետ կապված անկումների ռիսկի բարձրացումը հանդիսանում են լրացուցիչ պատճառ պացիենտների տեղափոխման համար ծերանոց [180]:Տեսողության սրության նվազումը առաջացնում է դժվարություններ մեքենա վարելու ընթացքում[22,181-184]: Համաձայն հեղինակների տվյալների կատարակտով վարորդները 5 տարվա ընթացում 2.5 անգամ ավելի հաճախ են ենթարկվել ճանապարհատրանսպորտային պատահարների քան առողջները[185,186]: Ըստ լայնամասշտաբ հետազոտությունների վիրահատված պացիենտները հայտնել են տեսողության նշանակալի լավացման մասին գիշերային և ցերեկային ժամերին մեքենա վարելի[187]:

Բոլոր հետազոտությունները վկայում են այն մասին,որ կատարակտի վիրահատությունից հետո տեսողական ֆունկցիաների բարելավումը բարձրացնում է նաև ֆիզիկական և հոգևոր առողջությունը,կյանքի որակը և կյանքը դարձնում է ավելի հարմարավետ և անվտանգ:

Վիրահատությունից հետո տեսողական ֆունկցիաների բարելավումը բնութագրվում է

- . տեսողության սրացման լավացում
- . ակնոցներից կախվածության նվազեցում
- . կարդալու և մոտիկ տարածության վրա աշխատելը հնարավորության լավացում
- . գունազգացողության լավացում
- . քինոկուլյար տեսողության լավացում
- . խորքային ընկալման լավացում
- . անիզոմետրոպիայի վերացում

Կատարակտի վիրահատությունից հետո ֆիզիկական հնարավորությունների լավացումը բնութագրվում է.

- . առօրյա գործունեության իրակացման հնարավորության բարձրացում
- . շարժունակության բարձրացում
- . աշխատանքային գործունեության պահպանում և բարձրացում

Կատարակտի վիրահատությունից հետո հոգեկան առողջության վերականգնումը բնութագրվում է.

- . ինքնուրույնության և ինքնգնահատականի բարձրացում
- . վնասվածքներից խուսափում
- . սոցիալական միջոցառումներին մասկակցության հնարավորություն
- . կուրության վախի վերացում:

Վարման մարտավարությունները

Արդյունավետության գնահատման ցուցանիշները

Կախված պացիենտի պահանջներից, կյանքի ձևից և բժշկական վիճակից յուրաքանչյուր պացիենտի համար գնահատման կոիտերիաները կարող են լինել տարբեր: Արդյունավետության ընդհանուր կրիտերիաներն են հանդիսանում.

- . տեսողության խանգարման սիմպտոմների նվազեցում

- . տեսողական ֆունկցիաների բարելավում
- . ցանկալի ռեֆրակցիոն արդյունք
- . կյանքի որակի, ֆիզիկական վիճակի և հոգեկան առողջության լավացում

Ախտորոշում

Պացիենտների կոմպլեքս հետազոտման նպատակը հանդիսանում է կատարակտի բացահայտումը, տեսողության խանգարման հիմնական պատճառի հաստատումը, այլ ակնաբուժական կամ համակարգային հիվանդությունների առկայության բացահայտումը, որոնք կարող են բերել տեսողական ֆունկցիաների խանգարման կամ ազդել վիրահատության ելքի կամ վերջնական արդյունքի վրա:

Տեսողական ֆունկցիաների խանգարման աստիճանի գնահատում

Կատարակտի ազդեցությունը տեսողական ֆունկցիաների վրա կարելի է սուբյեկտիվ գնահատել ելնելով պացիենտի ֆունկցիոնալ հնարավորություններից և տեսողության հետ կապված խնդիրների բնութագրերից: Վերջինը կարող է ախտորոշվել տեսողության սրության թեստի միջոցով: Նորագույն տեխնոլոգիաները թույլ են տալիս որոշել կատարակտով պայմանավորված աբերացիաները, որոնք ազդում են կյանքի որակի և տեսողության սրության վրա [188-189]: Ժամանակի ընթացքում մարդիկ հարմարվում են ցածր տեսողությանը և կարող են չնկատել տեսողական ֆունկցիաների աստիճանաբար վատացումը և կատարակտի զարգացումը: Չկա հետազոտման միասնական մեթոդ, որը կորոշի կոնկրետ պացիենտի մոտ կատարակտի ազդեցությունը տեսողական ֆունկցիաների և ֆունկցիոնալ հնարավորությունների վրա [28]: Եվ չկա հետազոտման մեթոդ, որը որոշում է վիրաբուժական միջամտության համար սահմանային վիճակ: Սնելենի աղյուսակը իդելական համապատասխանում է տարածության վրա առողջ աչքերում ռեֆրակցիոն անոմալիաները (միոպիա, հիպերմետրոպիա, աստիգմատիզմ) գնահատելու համար և կլինիկաներում լայն կիրառվում է: Թեև նախաավիրահատական

ցածր տեսողությունները ուղեկցվում են հետվիրահատական զգալի լավացմամբ[28],միայն հեռվի տեսողության սրության որոշումը մութ լուսավորությամբ սենյակում բարձր կոնտրաստ ունեցող օպտոտիպերի կիրառմամբ չի գնահատում տեսողական դժվարությունները ինչի հետ առնչվում է պացիենտը առօրյա կյանքում: Դրանց են դասվում այն բոլոր վիճակները, որոնք ուղեկցվում են ցերեկային և գիշերային շողացումներով,տեսողական ընկալման որակի խանգարումներով,ինչը բերում է մոնոկուլյար տեսողության և ֆանտոմային տեսիլքների[23]:Քանի որ տեսողության սրությունը մինչև վիրահատությունը կարող է լինել անհուսալի պրոգնոստիկ ֆակտոր հետվիրահատական շրջանում տեսողության սրության լավացման համար,կատարակտի վիրահատության որոշման ընդունումը չպետք է հիմնված լինի միայն տեսողության սրության արդյունքների վրա[4,30]:

Գոյություն ունեն 2 հիմնավորված հարցաշարերի հիմնական կատեգորիաներ տեսողական ֆունկցիաների գնահատման համար:Դրանք կյանքի որակի գնահատման հիմնական (Short Form-36[190],Sickness Impact Profiles[191],Quality of Well-Being Scale[33]) և մասնագիտական հարցերն են (տեսողական ֆունկցիաները գնահատելու համար):Կյանքի որակի գնահատման համար ընդհանուր հարցերը ավելի վատ են արտացոլում էքստրակցիայից հետո տեսողության լավացումը,քան տեսողության խանգարման համար նախատեսված հատուկ հարցերը[33,192]:Կատարակտի ժամանակ օգտագործվող հատուկ հարցերը իրենց մեջ ներառում են .

- Bernth-Peterson հարցաշարը [193]
- Visual Activities Questionnaire (տեսողական ակտիվության հարցաշար)
- ADVS (տեսողական ֆունկցիաների խանգարումների ընկալման հարցաշար) [31] և նրա մոդիֆիկացված ձևըVF-8R [194]
- NEIVFQ(National Eye Institue Visual Function Questionnaire)՝ Աչքի ազգային ինստիտուտի տեսողական ֆունկցիաների հարցաշարը [195,196]
- Catquest-9SF հարցաշարը [25]

Այդ հարցաշարերը օգտագործվում են որպես հետազոտման մեթոդներ տեսողական ֆունկցիաների ստանդարտացման համար և կարող են վերլուծվել և համեմատվել որոշ ժամանակ անց: Այնուամենայնիվ տվյալները իրենք իրենցով չեն հանդիսանում հիմք վիրաբուժական տակտիկա առաջարկելու համար: Օրինակ զգալի կատարակտով որոշ պացիենտներ վիրահատությունից հետո կարող են զգալ տեսողական ֆունկցիաների զգալի լավացում առանց անկետայում նշված դժվարություններին առնչվելով [197]: Սակայն տեսողական ֆունկցիաներ խանգարումները անկետայում գրանցելը կարող է հնարավորություն տալ գնահատել կատարակտով պացիենտների ընդհանուր վիճակը և օգնել նրանց բուժման համար որոշումներ կայացնելու հարցում: Տվյալ պահին չկա մեկ միասնական հարցաշար, որն առաջարկվում է կլինիկական պրակտիկայում տեսողական ֆունկցիաները գնահատելու համար: Տեսողական ֆունկցիաների գնահատումը կարող է իրականացվել տարբեր մեթոդներով և հանդիսանում է պացիենտի հետազոտման անբաժան մասը: Որպես կանոն, այն պացիենտները որոնք ավելի քիչ են անհանգստացած իրենց տեսողական ֆունկցիաներով ունենում են սիմետրիկ կատարակտներ երկու աչքերում:

Ակնաբուժական եփրագոյություններ

Կոմպլեքս հետազոտությունները (անամնեզ և բժշկական զննում) ներառում է մեծահասակների աչքերի զննման այն կոմպոնենտները [198], որոնք ուղղված են կատարակտի բուժմանն ու ավստորոշմանը:

-Անամնեստիկ տվյալները, ներառում են պացիենտի կողմից իր ֆունկցիոնալ կարողությունների գնահատումը, բժշկական վիճակը, տվյալ պահին դեղորայքների օգտագործումը կամ այլ ռիսկի ֆակտորների առկայությունը, որոնք կարող են ազդել վիրահատության ընթացքի և ելքի վրա (իմունոդեպրեսիվ վիճակ, a1 անտագոնիստների օգտագործում, շաքարային դիաբետ և այլն)

. որոշել տեսողության սրությունը հեռվի կորեկցիայով (տվյալները գրանցել)

- . որոշել լավագույն կորեկցվող տեսողության սրությունը(անհրաժեշտության դեպքում կատարել ռեֆրակտոմետրիա)
- . արտաքին զննում(կոպեր,թարթիչներ,օրբիտա,արցունքատար համակարգ)
- . ակնագնդերի դիրքը և նրանց շարժունակությունը
- . բբային ռեակցիաների գնահատում
- . ՆԱՃ չափում
- . առաջնային հատվածի բիոմիկրոսկոպիա
- . ոսպնյակի,մակուլայի,պերիֆերիկ ցանցենու,ՏՆՍ և ապակենման մարմնի մանրամասն հետազոտում լայն բբով
- . պացիենտի ֆիզիկական և հոգեկան վիճակի գնահատում

Հետազոտման լրացուցիչ մեթոդներ

Լրացուցիչ մինչվիրահատական հետազոտությունները սպեցիֆիկ չեն կատարակտի համար,բայց կարող են օգնել առանձին պացիենտներին որոշելու տեսողական խանգարումների պատճառներն ու աստիճանը,ինչպես նաև բացահայտել ուղեկցող այլ հիվանդություններ:

Դեպքերի մեծամասնությունում ակնաբույժը կարող է որոշել տեսողական ֆունկցիաների խանգարման գործում կատարակտի դերակատարությունը,բիոմիկրոսկոպիայի տվյալներից ելնելով և սպեցիֆիկ սիմպտոմները վերլուծելով:Երբեմն կատարակտի սպեցիֆիկ սիմպտոմները չեն համապատասխանում կատարակտի արտահայտվածության աստիճանին: Միայն տեսողության սրության չափումը թույլ չի տալիս գնահատել տեսողական ախտանշանները[199-203]:

Թույլ լուսավորության պայմաններում ուժեղ կոնտրաստով և վառ լուսավորված օբյեկտով հետազոտությունները, կարող են զգալի թերագնահատել ֆունցիոնալ

խանգարումները, որոնք պացիենտը զգում է լուսավորության տարբեր պայմաններում:

Կուրացնող շողացումների նկատմամբ զգայունության գնահատումը թույլ է տալիս որոշել տեսողական ֆունկցիաների խանգարումները տեսադաշտում վառ լույսի աղբյուրի առկայության դեպքում: Կատարակտը կարող է բերել տեսողական ֆունկցիաների զգալի խանգարումների վառ լուսավորության պայմաններում (օրինակ վառ ցերեկային լույսի կամ մեքենաների լուսարձակների ժամանակ): Կատարակտով պացիենտների տեսողության սրությունը կարող է լինել նորմալ կամ մոտ նորմային, բայց կրկնակի ստուգման դեպքում արդեն վառ լուսավորության պայմաններում պացիենտների տեսողության սրությունը կլինի արդեն զգալի նվազած:

Մակուլյար հատվածի բիոմիկրոսկոպիան և օֆտալմոսկոպիան թույլ է տալիս գնահատել նրա ֆունկցիոնալ վիճակը պաթոլոգիաների ժամանակ: Նման դեպքերում լրացուցիչ օգտակար ինֆորմացիա տալիս է կատարակտի էքստրակցիայից հետո տեսողության սրության գնահատումը: Տեսողության սրության պոտենցիալ գնահատումը ավելի ճշգրիտ է լինում սկսվող կամ արդեն զարգացած կատարակտով այն պացիենտների մոտ, որոնք չունեն ցանցենու հետ կապված պաթոլոգիաներ: Սակայն այդ հետազոտությունները քիչ ճշգրիտ են կատարակտով այն պացիենտների մոտ, որոնց տեսողության սրությունը չի գերազանցում 0,2-ը [209, 211, 213]:

Էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտությունները (ЭРГ, 3ВП) հիմնված են լուսային ստիմուլի դիմաց ցանցենու էլեկտրական պատասխանը գրանցելու վրա և ցուցված են ոչ կոմունիկատիվ որոշ պացիենտների ցանցենու ֆունկցիաները հետազոտելու համար:

Սպեկուլյար միկրոսկոպիան և պախիմետրիան կիրառվում է եղջերենու խնդիր ունեցող անձանց համար, դեկոմպենսացիայի և եղջերենու պղտորման ռիսկը գնահատելու համար: Ամենօրյա պրակտիկայում նման հետազոտությունները պարտադիր չեն, սակայն կասկածելի դեպքերում կարող են օգտակար ինֆորմացիա տալ (տարած վնասվածք կամ վիրահատություն, էնդոթելի ֆունկցիաների

խանգարում և այլն):Որոշ հետազոտություններ ցույց են տվել,որ սպեկուլյար միկրոսկոպիան տալիս է քիչ ինֆորմացիա կատարակտի էքստրակցիայից հետո դեկոմպենսացիայի զարգացման կանխագուշակման համար[217,218]:

Թեև ամենօրյա պրակտիկայում եղջերաթաղանթի մակերեսի հետազոտությունը տոպոգրաֆիայի միջոցով չի հանդիսանում պարտադիր,այն կարող է օգտակար լինել ուղիղ և ոչ ուղիղ աստիգմատիզմի գնահատման և կորեկցիայի,ինչպես նաև կերատոկոնուսի բացահայտման համար:

Օպտիկ կոհերենտ տոմոգրաֆիան,ցանցենու դիագնոստիկ և ֆլուորեսցենտային անգիոգրաֆիան նույնպես կարող են օգտակար լինել մինչև կատարակտի էքստրակցիան ֆովեայի կառուցվածքի փոփոխման,հաստացման կամ ակնահատակի զարգացող այլ հիվանդության բացահայտման համար,անգամ այն ժամանակ երբ ֆովեան և նրա հարակից հատվածները օֆտալմոսկոպիայի ժամանակ ունենում են նորմալ տեսք:

Ակնագնդի ՈԽՁՀ-ն (B-scan) շատ օգտակար է,երբ կատարակտը շատ խիտ է և աչքի հետին հատվածը չի վիզուալիզացվում օֆտալմոսկոպիայի ժամանակ կամ երբ պետք է հաստատել կամ բացառել հետին ստաֆիլոմայի առկայությունը:Տեսադաշտի,գունային զգացողության որոշումը,ակնագնդերի և ցանցենու նկարելը մինչև կատարակտի էքստրակցիան ամենօրյա պրակտիկայում նպատակահարմար չէ իրականացնել:

Բուժում

Ոչ վիրահատական բուժում

Կատարակտի բուժումը նախ և առաջ վիրահատական է:Ոչ վիրահատական բուժումը կայանում է հիվանդության սիմպտոմների,տեսողական ֆունկցիաների նվազեցման պատճառների մասին տեղեկացման և անհրաժեշտության դեպքում ակնոցային կորեկցիայի նշանակման մեջ:

Ներկայումս ապացուցված չէ,որ սննդային հավելումները դեր են խաղում կատարակտի պրոֆիլակտիկայում կամ դանդաղեցնում են պրոգրեսիվումը,ուստի սննդային հավելումները խորհուրդ չի տրվում նշանակել պացիենտներին:Նաև չկա որևէ դեղամիջոց որը կբուժի կամ կդանդաղեցնի կատարակտի զարգացումը,ուստի նման հարցերի դեպքում անաբույժը պետք է պատասխանի որ դրանք գիտականորեն ապացուցված չեն:Կատարակտի պրոգրեսիումը և զարգացումը որոշ չափով կարելի է նվազեցնել որոշ ռիսկի գործոնների կորեկցիայի միջոցով.օրինակ ծխելուց հրաժարվելով կամ ՇԴ-ի ընթացքը միշտ հսկողության տակ պահելով:

Հետազոտությունները ցույց են տվել,որ բժշկի կողմից ծխելուց հրաժարվելու խորհուրդները լավ մոտիվացիա են պացիենտների համար հրաժարվել այդ վատ սովորությունից [221-224]:Ակնաբույժները ունեն հնարավորություն պացիենտի հետ շփվելու ընթացքում խորհուրդ տալ հրաժարվել ծխելուց,ինչը բավականին լավ կանդրադառնա և ակնագնդի վիճակի և օրգանիզմի ընդհանուր վիճակի վրա:

Այն պացիենտները,որոնք երկար ժամանակ օգտագործում են կորտիկոստերոիդներ պերօրալ ամ ինհալյացիոն եղանակով,պետք է ինֆորմացված լինեն,որ գտնվում են բարձր ռիսկի խմբում[99-102,151,225]:

Արևապաշտպան ակնոցները նույնպես հանդիսանում են կանխարգելիչ միջոց:

Վիրաբուժական բուժում

Ցուցումները

Կատարակտի վիրաբուժական բուժման հիմնական ցուցումը հանդիսանում է տեսողական ֆունցկիաների նվազումը,ինչը արդեն չի գոհացնում պացիենտին և որի դեպքում վիրահատական բուժումը հանդիսանում է խելամիտ որոշում տեսողության լավացման տեսանկյունից:Կատարակտի վիրահատության այլ ցուցումներն են

. կատարակտի առկայության դեպքում նշանակալի անիզոմետրոպիա

ոսպնյակի զգալի պղտորում,որը խանգարում է անագնդի հետին հատվածի հիվադությունների ախտորոշանն ու բուժմանը

- . ֆակոզեն ուվեիտներ և երկրորդային գլաուկոմա(ֆակոլիզիս,ֆակոանաֆիլաքսիա)
- . ոսպնյակ,որը նպաստում է ա/խ անկյան բլոկադային(ֆակոմորֆիկ)

Վիրաբուժական բուժման հակացուցումներ

- . տանելի օպտիկական կորեկցիա,որը բավարարում է պացիենտի պահանջներն ու ցանկությունները
- . վիրահատությունից հետո տեսողության լավացում չի սպասվում և չկան այլ ցուցումներ վիրահատության համար
- . հետվիրահատական պատշաճ խնամքը ապահովված չի լինելու
- . պացիենտը կամ նրա կողմից լիզորվաց անձը չեն կարող տալ ինֆորմացված համաձայնություն պլանային վիրահատության համար

Մինչվիրահատական բժշկական հետազոտություններ

Ակնաբույժի պարտականությունները[227-228]

- . ապահովել պացիենտի մինչվիրահատական անհրաժեշտ հետազոտությունների անհրաժեշտ ծավալ
- . համոզվել,որ բժշկական փաստաթղթերը հստակ արտացոլում են ախտանշանները,կլինիկական առանձնահատկությունները և բուժման համար ցուցումները
- . վարել զրույց և պացիենտինին բացատրել ռիսկերը,առավելությունները,վիրաբուժական բուժումից հետո սպասվող արդյունքները,ներառյալ ռեֆրակցիոն սպասվող արդյունքները,վիրաբուժական փորձը,ստանալ պացիենտի կամ նրա կողմից լիազորված անձի համաձայնությունը վիրահատության համար[229]
- . քննարկել նախավիրահատական հետազոտությունների արդյունքները պացիենտի կամ նրա կողմից լիազորված անձի հետ
- . որոշել վիրահատական միջամտության ծավալը

- . ընտրել համապատասխան ներակնային ոսպնյակ
 - . պացիենտի կամ նրա կողմից լիազորված անձի հետ քննարկել հետվիրահատակ վարումը(խնամքի ռեժիմ,խնամող անձիք)
 - . պատասխանել պացիենտի հարցերին կապված վիրահատության և հետվիրահատական շրջանի հետ,ներառյալ պահանջվող ծախսերը
- Իրականում պացիենտի շահերից ելնելով նախավիրահատական հետազոտությունները պետք է իրականացնի օֆտալմոլոգիաբույժը,դա թույլ է տալիս ոչ միայն ժամանակին որոշել վիրահատության օպտիմալ ծավալը,այլ նաև վստահություն է ներշնչում պացիենտներին:Նախավիրահատակ հետազոտությունների որակի և ծավալի համար պատասխանատվություն է կրում ակնաբույժը:Չնայած դրան,որոշ էտապներ կարող են իրականացվել այլ որակավորված անձանց կողմից,նրա հսկողության տակ[227-228]

Բոլոր դեպքերում,պացիենտներին վիրահատության պատրաստման էտապում պետք է մանրամասն ծանոթանալ անամնեստիկ տվյալների և նրա ընդհանուր սոմատիկ զննման տվյալների հետ,որպեսզի ժամանակին պարզել առկա ռիսկի գործոնները սեդացիայի և ցավազրկման համար,որոնք համապատասխանում են պրոտոկոլներին:

Այն պացիենտների դեպքում,որոնք ունեն զուգակցող ծանր հիվանդություններ(խրոնիկ օբստրուկտիվ բրոնխաթոքային պրոցես,վատ վերահսկվող զարկերակային ճնշում,միոկարդի ոչ հին ինֆարկտ,անկայուն ստենոկարդիա,սրտային անբավարարություն,շաքարային դիաբետ և այլն),պարտադիր պետք է համապատասխան նեզ մասնագետի կոնսուլտացիան և եզրակացությունը[230]:Կախված անամնեստիկ տվյալներից և սոմատիկ ստատուսից,երբեմն անհրաժեշտ է լինում ոչոշ լաբորատոր հետազոտություններ[231]:Հետազոտությունները The Study of Medical Testing for Cataract Surgery շրջանակներում ցույց են տվել,որ լաբորատոր հետազոտությունների անցկացումը կատարակտի վիրահատության ամենօրյա պրակտիկայում չեն ազդում հիվանդության հետվիրահատական արդյունքների

վրա:Դրանք անհրաժեշտ են կոնկրետ պացիենտների մետ որոշ հիվանդությունների բացահայտման համար,և կատարակտի ամենօրյա պրակտիկայում խորհուրդ չեն տրվում[231,232]:

Բիոմետրիա և ՆԱՌ հաշվարկ

Աչքի աքսիալ երկարության և եղջերաթաղանթի կենտրոնական հատվածում բեկման ուժի ճշգրիտ որոշումը,հստակ բանաձևի հիման վրա օպտիմալ ՆԱՌ ըտրությունը հանդիսանում է հետվիրահատական ռեֆրակցիոն նպատակին հասնելու մինիմալ պահանջը:

Աչքի աքսիալ երկարության որոշելու համար օգտագործվում է ՌԻՁ Ա-սկանավորում կամ օպտիկական բիոմետրիա:Աչքի ՌԻՁ A-սկանավորումը կարող է իրականացվել կոնտակտային կամ իմորսիոն եղանակներով:Կոնտակտային եղանակի դեպքում եղջերենու կոմպրեսիան կարող է իրական աքսիալ երկարության արհեստական կրճատման պատճառ հանդիսանալ:Այլժա մեթոդով ստացված արդյունքների հստակությունը կախված է հետազոտողի փորձից և հմտություններից[233-235]:Իմերսիոն եղանակի դեպքում բացակայում է սենսորի և եղջերենու ուղղակի կոնտակտը,ինչը թույլ է տալիս ստանալ ավելի ճշգրիտ տվյալներ:Օպտիկ բիոմետրիան թույլ է տալիս առանց կոնտակտային եղանակով չափել աչքի աքսիալ երկարությունը լույսի աղբյուրի օգնությամբ:Ստացված արդյունքները բնութագրվում են ավելի բարձր հստակությամբ համեմատած ՌԻՁ A-սկանավորման արդյունքների հետ[233,236,237]:Համարվում է,որ պտիկ բիոմետրիայի տվյալները համադրելի են իմերսիոն եղանակով ստացված տվյալների հետ:Օպտիկ բիոմետրիայով ստացված տվյալները կախված չեն կատարողի փորձից կամ հմտություններից[238,240]:

Նրա մյուս առավելությունը ՌԻՁ Ա-սկանավորումից հանդիսանում է նրա հասարակ լինելը.ավտոմատացված հետազոտելը,հայացքի ճիշտ ֆիքսացիայի դեպքում հնարավորությունը չափելու հեռավորությունը մինչև մակուլայի կենտրոն:ՕԲ-ի ժամանակ աչքի աքսիալ առանցքի չափումը կատարվում է ոչ թե նրա անատոմիական առանցքի,այլ տեսողական առանցքի երկայնքով:Տվյալ մեթոդը թույլ

ք տալիս ստանալ ճշգրիտ տվյալներ անգամ այն դեպքերում, երբ ֆովեան պրոեկցվում է սկլերայի հետին ստաֆիլոմայի պատերին[242]: ՕԲ կիրառումը տալիս է հստակ տվյալներ վիտրեալ խոռոչի սիլիկոնային տամպոնադայի ժամանակ[243,244]: Չնայած այս մեթոդի առավելություններին, այն չի կարող լրիվ փոխարինել ՈԻՁ բիոմետրիային: ՕԲ-ի կիրառումը սահմանափակվում է պղտոր ոսպնյակի առկայության դեպքում[245], որոշ տեսակի կատարակտներ և տեսողական խանգարումներ դժվարեցնում են հայացքի ֆիքսումը[246,247]: Խորհուրդ է տրվում հետազոտել երկու աչքերը միասին և համեմատել ստացված արդյունքները, անգամ եթե մյուս աչքի վիրահատություն պլանավորված չէ:

ՆԱՌ-ի հաշվարկի բանաձևերը հիմնվում են կերատոմետրայի տվյալների վրա, ինչը ընդգծում է եղջերաթաղանթի ռեֆրակցիոն ցուցանիշների կարևորությունը: Անհրաժեշտ տվյալները կարելի է ստանալ մեխանիկական կամ ավտոմատացված կերատոմետրիայի, կամ եղջերենու տոպոգրաֆիկ հետազոտման ժամանակ: Կերատոռեֆրակցիոն միջամտություններից հետո եղջերաթաղանթի բեկման ուժի չափումը նրա կենտրոնական հատվածում փոքր ինչ դժվարանում է (նայել կատարակտի վիրահատություն կերատոռեֆրակցիոն միջամտություններից հետո բաժնում): ԿՌՄ-ից հետո եղջերենու բեկման ուժի չափման համար կատարվող բոլոր հետազոտությունները լինում են ոչ բավարար էֆեկտիվության: Ստանդաշտ կերատոմետրի կիրառումը այս դեպքերում բերում է անկանխատեսելի ռեֆրակցիոն արդյունքի:

ՆԱՌ ընտրության հարցում անհրաժեշտ է օգտագործել նոր սերնդի բանաձևեր (օրինակ Hoffer Q, Holladay և SRK/T): Էքստրեմալ բարձր միոպիայով պացիենտների համար կիրառվում են շատ ցածր բեկման ուժ ունեցող ՆԱՌ-ներ, որոնք տատանվում են planum-ից դեպի երկու կողմերը և պահանջում են հատուկ կոնստանտ, ինչպես (-)-ի նշանակության, այնպես էլ (+)-ի նշանակության դեպքում, ինչը տարբերվում է արտադրողի առաջարկից[254]: Էքստրեմալ բարձր հիպերմետրոպիայով պացիենտների մոտ, երբ պահանջվող ՆԱՌ-ի բեկման ուժը դուրս է գալիս թույլատրելի դիապոզոնի սահմանները, անհրաժեշտության դեպքում

կարող է կիրառվել piggyback-հետին խցիկ երու ՆԱՌ-ի ինպլանտացիա:Եվ եթե կա նման անհրաժեշտություն,խորհուրդ է տրվում կիրառել օպտիկ էլեմենտների տարբեր նյութերից բաղկացած ՆԱՌ-ներ և ,խորհուրդ է տրվում հետն խցիկի միաժամանակյա ինպլանտացիա չիրականացնել:Դա մինիմալի է հացնում ինտերլենտիկուլյար<ՆԱՌ-ի միջև> մեմբրանների առաջացումը[256,257]:Առաջնային piggyback-ի դեպքում ՆԱՌ-ի բեկման ուժի հաշվարկը լինում է քիչ կանխատեսելի,քան միակ ՆԱՌ-ի հաշվարկը,ինչը կախված է աչքում նրանց էֆեկտիվ կոմբինացված դիրքի կանխատեսման դժվարությունների հետ[258]: piggyback ինպլանտացիայի բարենպաստ ռեֆրակցիոն արդյունք նկարագրված է միայն դեպքերի երկու հետազոտությունների շարքում[259,260]:

Անեսթեզիոլոգիական ձեռնարկ

Կատարակտի վիրաբուժության մեջ օգտագործվում է ընդհանուր և տեղային(ռեգիոնալ) անեսթեզիայի (օր.ռետրոբուլբար,պարաբուլբար,սուբտենոնյան ինյեկցիա,ներխցիկային,մակերեսային ինստիլյացիոն) եղանակներ:Կարըոր է նախապես պացիենտի հետ քննարկել ցավազրկման եղանակը:Դա անհրաժեշտ է նրա համար,որպեսզի պացիենտը տեղեկացված լինի դիսկոմֆորտի աստիճանի,ցավային զգացողությունների,գիտակցության վիճակի և հնարավոր բարդությունների մասին:Հետազոտությունները չեն բացահայտել հստակ կապ վիրահատության ֆունկցիոնալ արդյունքների,վիրահատության ելքի,պացիենտի բավարարված լինելու,կողմնակի էֆեկտների և ցավազրկման եղանակների միջև[261-268]:Կատարակտի վիրահատության մեջ ավելի նախընտրելի է տեղային ցավազրկումը սեդացիայով կամ առանց կիրառմամբ:Ընդհանուր ցավազրկում խորհուրդ է տրվում կիրառել բժշկական,հոգեկան կամ վիրահատական ցուցումներով:Կատարակտի վիրահատության տեղային անզգայացման հետազոտողները ապացուցել են,որ մի շարք ցավազրկման եղանակներ հանդիսանում են անվնաս և էֆեկտիվ,որոնք ապահովում են ցավի լավ կամ գերազանց հսկողություն միջամտության ընթացքում[261,265-269]:Այնպիսի բարդություններ,ինչպիսիք են շլություն,ակնագնդի պերֆորացիա,ռետրոբուլբար

արյունազեղում,ինրտրավասկուլյար կամ սուբարախնոիդալ ինյեկցիա,մակուլյար հատվածի ինֆարկտ ստացվում են ասեղի կիրառման դեպքում և դրանք կարելի է կանխել կիրառելով բուֆ կոնյուլա կամ նախապատվությունը տալով մակերեսային անզգայացմանը[261,265-269]:Ակնագնդի պերֆորացիայի ռիսկը,ռետրոբուլբար ներարկման ժամանակ մեծանում է բարձր առանցքային միոպիայի կամ սկլերայի ցիրկուլյար պլոմբավորումից հետո:Էպիբուլբար կամ պարաբուլբար անեսթեզիայից հետո որոշ պացիենտներ նկատում են տարբեր տեսողական ընկալումներ,տեսնում են լույս,տարբեր գույներ,վիրաբուժական գործիքներ,վիրաբույժի մատները:3-18% պացիենտները դրանք բնութագրում են ինչպես անցանկալի երևույթներ,և դրանց նախորոք քննարկումը պացիենտի հետ կարող է որոշ չափով նվազեցնել նրանց անհանգստությունը[279,271]:

Ներերակային ներարկումներ անհրաժեշտ է սեդատիվ պրեպարատների կիրառման ժամանակ պոտենցիալ կողմնակի ռեակցիաների բուժման համար[272]:Հաշվի առնելով մակերեսային ցավազրկման կիրառման տենդենցը,ամենօրյա պրակտիկայում ներերակային ցավազրկումները չեն հանդիսանում անհրաժեշտություն:Վիրահատության ժամանակ մոնիթորինգը ներառում է ԷԿԳ,պուլս օքսիգենոմետրիա,զարկերակային ճնշման չափում և շնչելու հսկողություն:Ընդհանուր վիճակի մոնիթորինգ իրականացվում է կոմպետենտ և որակավորված անձնակազմի կողմից(ոչ վիրահատող օֆթալմոլոգի):Մի հետազոտության արդյունքները ցույց են տվել,որ եթե անգամ անամնեստիկ տվյալները,լաբորատոր հետազոտությունների արդյունքները և ԷԿԳ տվյալները ի սկզբանե չեն նախատեսում անեսթեզիոլոգի միջամտություն,37% դեպքերում կարող է առաջանալ նրանց միջամտության կարիք[273]:Նույն հետազոտության արդյունքում,որպես որտեղ բոլոր պացիենտները ստացել են պարաբուլբար բլոկադա,չի գրանցվել որևէ նեգատիվ ազդեցության դեպք վիրահատության ելքի վրա:Մեկ այլ հետազոտության ընթացքում,կատարակտի վիրաբուժության 1957 դեպքերում ցավազրկման մոնիթորինգ ապահովվել է միջին բժշկական կրթություն ունեցող մասնագետների կողմից`անեսթեզիոլոգի ասիտենտներ,և նրանք իրակացրել են մակերեսային կամ էպիբուլբար անեսթեզիա սեդացիայով կամ

առանց:4-8% դեպքերում անհրաժեշտ է եղել անեսթեզիոլոգի կոնսուլտացիա,իսկ անեսթեզիոլոգների միջամտության կարիք անհրաժեշտ է եղել 1% դեպքերում:

Կատարակտի վիրաբուժության մեջ տեղային ցավազրկման կիրառման արդյունքների վերլուծությունը թույլ ապացուցում է ներերակային կամ ներմկանային անալգետիկայի առավելությունը ցավային զգացումների թուլացման,տազնապի զգացողության և պացիենտի բավարարվածության բարձրացման համար[261]:Անբավարար են տվյալները,որոնք ապացուցում են մի սեդատիվ ռեժիմի առավելությունը մյուսների նկատմամբ:The Study of Medical Testing for Cataract Surgery շրջանակներում հետազոտությունները պարզել են,որ ներերակայինսեդատիվ միջոցների կիրառման ժամանակ պացիենտները զգացել են ավելի արտահայտված քնկոտություն և սրտխառնոց:Սրտխառնոցը և փսխումը կախված են ներերակային ներարկված նյութի քանակից[262]:Նաև չափից ավելի սեդատիվ պրեպարատների ներերակային ներարկումը վիրահատության ընթացքում կախված է անբարենպաստ կողմնակի էֆեկտների ռիսկերի բարձրացման հետ և այդ ռիսկերը հատկապես մեծանում են տարբեր պրեպարատների միաժամանակյա ներերեկային ներարկման ժամանակ[262,276,277]:Համոզից չեն ապացույցները,նախքան վիրահատությունը անքսիոլիտիկների պերորալ ընդունումը տազնապի զգացողությունը նվազեցման համար[276-278]:

Այսպիսով,հաշվի առնելով այս կամ այն անեսթեզիայի օգտին ապացույցների բացակայությունը,կատարակտի վիրաբուժության ժամանակ,ցավազրկման մեթոդները պետք է ընտրվեն կախված պացիենտի,վիրաբույժի և անեսթեզիոլոգի պահանջներից և նախապատվություններից:

Ինֆեկցիոն բարդությունների կանխարգելում

Հետվիրահատակ էնդոֆթալմիտի զարգացման պրոֆիլակտիկան ունի հստակ նշանակություն,կապված նրա պոտենցիալ բարդ հետևանքների հետ:Այդ ուղղությամբ հսկվող հետազոտությունների անցկացումը դժվար իրագործելի է կապված հիվանդության ցածր մակարդակի,տարբեր պրակտիկ

մողեւների, հակասական որոշումների և վիրաբուժական տեխնիկայի արագ զարգացման տեմպի հետ: Ամենամեծ անհանգստությունը առաջացնում են երկու հանգամանք-դա ստաֆիլակոկների (ամենահաճախակի պատճառ) տարբեր շտամների աճող ռեսիստենտաանությունն է լայն սպեկտրի հակաբիոտիկների նկատմամբ, ներառյալ վերջին սերնդի ֆտորիսինոլոնները, և սուր հետվիրահատական էնդոֆթալմիտի զարգացման դեպքերի քանակի ավելացումը՝ վիրահատությունից հետո ավելի քան 1 շաբաթից հետո [52-55]:

Պատմականորեն հետվիրահատական էնդոֆթալմիտի զարգացման հաճախականությունը ազնում էր կատարակտի 1000 վիրահատություններից 0,5-1 դեպք: Սակայն սկսած 1994թ.-ից նկատվում է կատարակտի վիրահատությունից հետո հետվիրահատական էնդոֆթալմիտի զարգացման հաճախականության աճ, այն դեպքում, երբ առաջային հատվածի այլ վիրահատությունների դեպքում նկատվում է դրանց քանակի նվազում [64, 279-281]: Ենթադրվում էր, որ առկա է կապ էնդոֆթալմիտի հաճախականության բարձրացման և կոնիական պրակտիկայում եղջերենու թափանցիկ շերտերի միջով մուտքի ներդրման մեջ, քանի որ այդ տեսակ մուտքը սխալ կիրառման դեպքում ավելի հակված է կայունության խանգարմանը, արտահոսքի և ռեֆլուքսի համեմատաժամ կորնեոսկլերալ մուտքի հետ [282-289]: Մյուս կողմից 4 խոշոր հետազոտություններ չեն հայտնաբերել ինֆեկցման հաճախականության աճ եղջերենու մուտքի ժամանակ համեմատաժամ այլ տեսակի մուտքերի հետ [50, 290-292]: Անկախ վիրաբուժական տեխնիկայից, հետվիրահատական էնդոֆթալմիտի պարտադիր պրոֆիլակտիկա է համարվում վիրահատական վերքի լրիվ հերմետիզացիան, քանի որ վերքից ֆիլտրացիայի առկայության դեպքում մի քանի անգամ մեցանում է էնդոֆթալմիտի զարգացման վտանգը [65]: Էնդոֆթալմիտի զարգացման մյուս ռիսկի գործոններն են համարվում ոսպնյակի հետին կապսուլայի ներվիրահատական վնասում, ապակենման մարմնի արտանկում, վիրահատության երկարատևությունը, իմունոդեֆիցիտ վիճակը, ակտիվ բլեֆարիտի առկայությունը, արցունքատար ուղիների անանցանելիությունը, վերքի ցածր տեղակայումը, արական սեռը և տարիքը [59, 65, 66, 291, 293-296]: 3 ռետրեսպեկտիվ հետազոտությունների հեզինակները նշում են կատարակտի հարթ մանուալ

էքստրակապտուլյար էքստրակցիայից հետո էնդոֆթալմիտի հաճախականության ավելացում համեմատած ֆակոէմուլսիֆիկացիայի հետ[279-299]:սակայն վերքի լրիվ հերմետիզացիայից հետո չկա ապացույց ,որ վիրաբուժական տեխնիկան ազդում է էնդոֆթալմիտի զարգացման վրա:

Չկան հավաստի տեղեկություններ,որոնք ապացուցում են նյութի ազդեցությունը էնդոֆթալմիտի զարգացման վրա,որից բաղկացած է ՆԱՌ օպտիկ մասը[59,284,299,300]:Պոլիպրոպիլենից հենարանային էլեմենտների առկայությունը կարող է էնդոֆթալմիտի զարգացման հաճախականության աճի պատճառ հանդիսանալ:Դա կապված է պոլիպրոպիլենին բակտերիայի բարձր ադգեզիայի հավանականության հետ[303,304]:

Ապացուցված է,որ հակաբիոտիկները նվազեցնում են բատերաների ադգեզիան ՆԱՌ-ի մակերեսին:Առաջային կապտուլայի ախտոտման հավանականությունը ՆԱՌ ինպլանտացիայի ժամանակ մեծանում է ՆԱՌ-ի և ակնագնդի առաջային մակերեսի կոնտակտից հետո:Մի հետազոտություն ապացուցել է,որ եթե ՆԱՌ ինպլանտացվում է կարտրիջի միջոցով առանց ակնագնդի առաջային հատվածի հետ կոնտակտի,ներակնային ինֆեկցման զարգացման հավանականությունը կրճատվում է [305]:

Հազվադեպ դեպքերում ինֆեկցման պատճառ կարող են լինել աղտոտված վիրաբուժական գործիքները[306-309] կամ վիրահատական կեղտոտված միջավայրը[310,311]:Մեծամասամբ դեպքերում ինֆեկցման աղբյուր է հանդիսանում պացիենտի վարակված պերիօկուլյար հատվածի ֆլորան[312]:Ենթադրվում է,որ էնդոֆթալմիտի ռիսկը կարելի է նվազեցնել,եթե նվազեցվի միկրոբների քանակը ակնագնդի առաջային հատվածի վրա:

Տվյալ հայեցակարգին համապատասխան, էնդոֆթալմիտի զարգացման պռոֆիլակտիկայի նպատակով,խորհուրդ է տրվում վիրահատությունից առաջ լայն սպեկտրի հակաբիոտիկների ինստիլյացիա,վիրահատարանում կոնյունկտիվայի խոռոչի մշակում 5% յոդի ջրային լուծույթով,պերիօկուլյար հատվածի մշակում 10% յոդի ջրային լուծույթով,կոպեզրերի մանրակրկիտ մշակում ստերիլ նյութով,հակաբիոտիկի ավելացում իրիգացիոն հեղուկի մեջ,վիրահատության

վերջում հակաբիոտիկի ներմուծում առաջնայի խցիկ, հակաբիոտիկների ներերակային ներարկում և հետվիրահատական շրջանում հակաբիոտիկների ինստիյացիա:

Հսկվող ոչ ռանդոմիզացված և մեկ ռետրոսպեկտիվ հետազոտություն, չվիրահատվող աչքը օգտագործելով որպես վերահսկողություն, ապացուցել են, որ 5% յոդի ջրային լուծույթով կոնյունկտիվայի խոռոչի մշակումը կրճատում է բակտերիաների քանակը, նվազեցնելով հետվիրահատական ինֆեկցման զարգացման հավանականությունը [313-315]: Ավելի թույլ կոնցենտրացիայով յոդի ջրային լուծույթի կիրառումը եղել է նվազ արդյունավետ [316]: Նաև բացահայտել են, որ լիդոկաինի գելի նախնական ապլիկացիան նվազեցնում է յոդի ջրային լուծույթի հակամիկրոբային հատկությունները [317]:

Ընդհանուր հակաբակտերիալ թերապիան կիրառվում է հազվադեպ. սակայն ապացուցված է, որ որոշ պերօրալ ֆտորիսինոլոններ հեշտությամբ թափանցում են հեմատոֆթալմոլոգիական պատենշը և աչքի ներսում հասնում են անհրաժեշտ մինիմալ կոնցենտրացիայից բարձր կոնցենտրացիայի: Ըստ այդմ (աչք հեշտ թափանցող) հակաբիոտիկների պերօրալ նշանակումը կարող է օգուտ տալ [318-321]:

Ավելանում է ապացույցների քանակը այն մասին, որ ներակնային հակաբիոտիկների կիրառումը նվազեցնում է էնդոֆթալմիտի ռիսկը: Եվրոպական կատարակտոլոգների և ռեֆրակցիոն վիրաբույժների հասարակության մասամբ կույր և ռանդոմիզացված հետազոտությունները ցույց են տվել, որ ֆակոէմուլսիֆիկացիայից հետո Ցեֆուրօքսիմի ներխցիկային ներմուծման օգտակարությունը: հսկողության տակ գտնվող 13698 պացիենտների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն խմբում, որտեղ Ցեֆուրօքսիմի ներխցիկային ներմուծում չի իրականացվել, էնդոֆթալմիտի զարգացման հավանականությունը կազմել է 4,59%: Շվեդ գիտնականների հետազոտությունները ցույց են տվել, որ կրկնակի նվազում է էնդոֆթալմիտի զարգացման հավանականությունը Ցեֆուրօքսիմի ներխցիկային ներմուծումից հետո [59, 322]: 5 այլ Եվրոպական հետազոտություններում նշվել է հետկատարակտային էնդոֆթալմիտների էֆեկտիվ նվազեցում ցեֆուրօքսիմի ներմուծման ֆոնի վրա [51, 299, 323-326]:

Կատարակտով պացիենտների առաջնային խցիկի հեղուկի մեկ հետազոտություն ցույց է տվել, որ Վանկոմիցինի 1մգ ներխցիկային միանվագ ներմուծումից հետո, առաջնային խցիկում բակտերիաների ինհիբիդացնող կոնցենտրացիայից բարձր կաոնցենտրացիա մնում է ավելի քան 24 ժամ: Չնայաց որ, էֆեկտիվությունը ցուցադրված չի եղել, որոշ հետազոտողներ աջակցում են էնոֆթալմիտի պրոֆիլակտիկայի համար Մոքսիֆլոքսացինի ներխցիկային ներմուծման տեսակետը[327-329]:

Ոչ արտադրական պայմաններում բացված հակաբիոտիկների լուծույթները ներխցիկային ներմուծման համար բարձրացնում են պրեպարատների սխալ լուծման և հնարավոր տոքսիկության վտանգը[330]:

Ի հակակշիռ հակաբիոտիկների ներխցիկային ներմուծման հետազոտությունների, հակաբիոտիկների իրիգացիոն լուծույթի մեջ ավելացման էֆեկտիվության հետազոտություններ չեն անցկացվել, չնայաց որ այն պրակտիկայում ունի լայն կիրառում[331]: համեմատած ներխցիկային ներմուծման հետ, հակաբիոտիկի իրիգացիոն հեղուկի մեջ ավելացումը ունի տեսականորեն թերություն. նրա ազդեցության ժամանակը և պրեպարատի անբավարար կանխատեսելի կոնցենտրացիայի ներակնային կառույցներում[57]:

Երկու ռետրոսպեկտիվ հետազոտություններ ապացուցել են վիրահատության վերջում հակաբիոտիկի ենթակոնյունկտիվալ ներարկման առավելությունները: Սակայն այս դեպքում առկա է դեղի տոքսիկ ազդեցության վտանգ. եթե այն վիրահատական վերքով ներթափանցի աչքի ներս: Նաև առկա է մակուլայի ինֆարկտի վտանգ ամինոգլիկոզիդների կիրառման ժամանակ[66, 332, 333]:

Ռետրոսպեկտիվ հետազոտությունները ենթադրում են, որ հակաբիոտիկի ինստիյացիան կոնյունկտիվալ պարկ կարող է լինել էֆեկտիվ և Ամերիկյան կարատակալոգների և ռեֆրակցիոն վիրաբույժների հասարակության անդամների(ASCRS) հարցումները ցույց են տվել, որ հարցվածների 88% օգտագործել է հակաբիոտիկների տեղային կաթիլներ մինչև վիրահատությունը, իսկ 98%՝ վիրահատությունից հետո[331]: Կաթեցման ժամանակի առումով այլ

հետազոտություններ խորյուրդ են տալիս սկսել հակաբիոտիկների կաթիլների օգտագործում վիրահատական օրը կամ անմիջապես վիրահատությունից հետո, այլ ոչ թե սկսել վիրահատության հաջորդ օրվանից:

Գատիֆլոքսացինի և մոքսիֆլոքսացինի կաթիլները ունեն լայն սպեկտրի ազդեցություն, բակտերիցիդ ազդեցություն, աչքի ներս հեշտ թափանցման հնարավորություն և ASCRS հարցվածների կողմից ավելի նախընտրելի են:

Այնուհանդերձ, պրեպարատների բարձր արժեքը ստիպում է չմոռանալ նրանց առավելությունը համեմատաբար ավելի էժան հակաբիոտիկների նկատմամբ համոզիչ ապացույցների բացակայության մասին տեղային կամ ներխցիկային օգտագործման համար[334]:

Այսպիսով էնդօֆթալմիտի զարգացման ռիսկի հիմնական գործոններն են հանդիսանում. տարիքը, վիրահատական վերքից ֆիտրացիայի առկայությունը, աչքի առաջնային և հետին հատվածների յատրոգեն հաղորդակցումը:

Ինֆեկցիոն բարդությունների պրոֆիլակտիկայի համար խորհուրդ է տրվում կոնյունկտիվալ պարկը մշակել 5% յոդի ջրային լուծույթով:

Ավելի շատ են հայտնվում տվյալներ, որոնք ապացուցում են վիրահատության վերջում հակաբիոտիկների ներխցիկային կիրառման էֆեկտիվությունը: Հակաբիոտիկների ներերակային ներարկման մասին ապացույցները մնում են համեմատաբար ավելի թույլ: ներխցիկային կամ ենթակոնյունկտիվալ ներարկման ալտերնատիվ տարբերակ է համարվում հակաբիոտիկ կաթիլների կիրառումը հենց վիրահատության օրը, և ոչ թե հաջորդ օրը:

Շատ կլինիկական հետազոտությունների անբավարար լինելը թույլ չի տալիս կոնկրետ հակաբիոտիկ կամ նրա տեղ հասցնելու եղանակի մասին խորհուրդներ տալ էնդօֆթալմիտի պրոֆիլակտիկայի համար:

Վերջում վիրաբույժը պետք է ապահովի պերիօկուլյար հատվածի պատշաճ անտիսեպտիկան, որպես կանոն դրա համար կիրառվում է յոդի ջրային լուծույթ և վիրահատական վերքի լրիվ հերմետիզացիա[65]: Կարևոր նշանակություն ունի սկսել

հակաբիոտիկների կաթիլների օգտագործումը հենց վիրահատության օրը: Նախավիրահատական շրջանում հակաբիոտիկոթերապիայի հարցը որոշում է ակնաբույժը, այն ինդիվիդուալ է:

Աչքի առաջային հատվածի տոքսիկ համախտանիշ

Աչքի առաջային հատվածի տոքսիկ համախտանիշը (ԱԱՏՀ) դա ստերիլ հետվիրահատական բորբոքային ռեակցիա է, որը որպես կանոն զարգանում է վիրահատությունից 12-48 ժամ հետո և կարող է նմանվել ինֆեկցիոն էնդոֆթալմիտին: Կլինիկական պատկերը բնորոշվում է եղջերաթաղանթի դիֆուզ այտուցով՝ <<լիմբից լիմբ>>, առաջային խցիկի հեղուկի պղտորումով, բորբոքային բջիջների, ֆիբրինի, հիպոպիոնի առկայությամբ: Ծանր դեպքերում զարգանում է բքի ատոնիա, երկրորդային գլաուկոմա և եղջերաթաղանթի դեկոմպենսացիա: Չնայած հակաբորբոքային բուժումը բավականին էֆեկտիվ է, ԱԱՏՀ-ն կարող է հանդիսանալ անդարձելի վնասման պատճառ: Պրոցեսի ինֆեկցիոն էթիոլոգիայի դեպքում անհրաժեշտ է իրականացնել առաջային խցիկի և ապակաենման մարմնի բակտերիոլոգիական հետազոտություն՝ ժամանակին հակաբակտերիալ թերապիան սկսելու նպատակով:

ԱԱՏՀ-ի զարգացման հետ ասոցացվում են բազմաթիվ գործոններ, այդ պատճառով դժվար է լինում հայտնաբերել դրա էթիոլոգիան: ԱԱՏՀ-ի զարգացման ընդունված պատճառներ են հանդիսանում ջերմակայուն գրամ բացասական էնդոտոքսինի առկայությունը ջրամատակարարման համակարգում, քիմիական լվացող միջոցների և էնզիմների կիրառումը վիրաբուժական գործիքների օգտագործման ընթացքում, եղջերաթաղանթի կտրվածքով քսուքների անցումը աչքի խոռոչ, վիսկոէլաստիկ միջոցների դենատուրացված մնացորդները, ոչ ֆիզիոլոգիական թթվայնությամբ և օսմոլյարությամբ լուծույթների կիրառումը, ներակնային արհեստական ոսպնյակների (IOL) համար հղկիչ միացությունների կիրառումը: Հակաբիոտիկների սխալ պատրաստումը և բարձր դոզայով ներարկումը առաջային խցիկ նույնպես հանդիսանում է ԱԱՏՀ-ի զարգացման պոտենցյալ պատճառ: 2005-ից 2009-ը թթ. անցկացված տպագրված

հետազոտության մեջ գնահատվել են ԱԱՀՏՀ-ի 1276 դեպքեր անկետավորման (77 կենտրոն) և անմիջական այցելության (54 կենտրոն) միջոցով կենտրոններ: Ամենից հաճախ ԱԱՀՏՀ-ի զարգացման հետ ասոցացվել է վիրաբուժական գործիքների անբավարար մաքրագերծումը և ստերիլիզացիան, ֆակոէմուլսիֆիկացիայի և ասպիրցիոն - իրիգացիոն բռնակների ոչ բավարար ախտահանումը, ֆերմենտատիվ մաքրող միջոցների և ուլտրաձայնային բաղնիքի անհամապատասխան օգտագործումը[68]:

Վերջերս կատարված ռետրոսպեկտիվ հետազոտությունում բացահայտվել է կատարակտի վիրաբուժական 26408 դեպք, որոնցից 1 տարվա ընթացքում զարգացել է ԱԱՀՏՀ-ի 60 դեպք, ինչը համապատասխանում է 0.22% հաճախականությանը[67]:

Կատարակտի վիրաբուժության ստուգիչ ցուցակ/չեկ լիստ

Կատարակտի վիրաբուժության չեկ լիստերը նախատեսված են կանխարգելիչ սխալների մինիմիզացիայի համար, դրանք ներառում են աչքը, որի վրա անց է կացվելու միջամտությունը (<<սխալ աչք>>) և վիրաբուժական միջամտությունը (<< սխալ ներակնային արհեստական ոսպնյակ>>), մինչև վիրահատությունը և վիրահատության օրը կատարվող միջամտությունների ցուցակը, ինչպես նաև բժշկական օգնության խմբի անդամների միջև պատասխանատվության և պարտականությունների բաշխումը[77-82]: Նախավիրահատական ուղեցույցներով և ստուգիչ ցուցակներով առաջնորդվելը թույլ է տալիս կրճատել անցանկալի դեպքերի և սխալների քականությունը:

Վիրաբուժական տեխնիկա

Բացի վիրաբուժական միջամտության բոլոր էտապների տեխնիկական կատարումից վիրաբույժից պահանջվում են համապատասխան կոգնիտիվ ունակություններ, անալիտիկ մտածողություն և որոշակի փորձ՝ վիրահատության

Ժամանակ առաջացած անկանխատեսելի հանգամանքները, խնդիրներն ու բարդությունները ժամանակին բացահայտելու և լուծելու համար:

Կատարակտի հեռացման մեթոդներից նախապատվությունը տրվում է էքստրակապսուլյար էքստրակցիային՝ ամենից հաճախ ֆակոէմուլսիֆիկացիայի մեթոդով:

Leaming-ը 2010թ-ին անցկացրած հարցման մեջ (The 2010 Leaming's survey) ընդգծել է այն փաստը, որ շատերը (ASCRS-ի անդամները) նախընտրում են տեղային կաթիլային անոգայացումը, եղջերաթաղանթի թափանցիկ շերտերի միջով մուտքը և առանց կարի վիրաբուժությունը[338]: Կատարակտի էքստրակապսուլյար էքստրակցիայի (ԿԷԷ) և փոքր վիրաբուժական կտրվածքով ֆակոէմուլսիֆիկացիայի (ՖԷԿ) ռանդոմիզացված հետազոտության մեջ բացահայտվել են վերջինիս առավելությունները՝ ներվիրահատական բարդությունների քանակի նվազումը և վիճակագրորեն նշանակալի ավելի բարձր տեսողության սրությունը: Նաև 1 ամյա հսկողության ընթացքում հայտնաբերվել է երկրորդային կատարակտի զարգացման ավելի ցածր հաճախականություն[339]:

Ֆեմտոսեկունդային (Femtosecond) լազերը դա կատարակտի վիրաբուժության ևս մեկ այլընտրանք է [340], որը կարող է օգտագործվել եղջերաթաղանթային կտրվածքի [341], առաջային կապսուլոտոմիայի իրականացման և կորիզի կոտրման նպատակով: Այսօր միայն մի քանի աղբյուրներ են բերում ֆեմտոսեկունդային լազերի հարաբերական առավելությունների և թերությունների վերաբերյալ ապացույցներ:

Կատարակտի հաջող վիրաբուժության հիմքում ընկած են.

1. վիրաբուժական կտրվածքի մանրակրկիտ հերմետիզացիա, որը կբերի մինիմալ հետվիրահատական աստիգմատիզմի և կքչացնի սեփական եղջերաթաղանթային աստիգմատիզմը [342-345]
2. ոսպնյակային զանգվածների մանրակրկիտ հեռացում

3. եղջերաթաղանթի էնդոթելի, ծիածանաթաղանթի և այլ ներակնային կառուցվածքների համար միջամտության ատրավմատիկություն կամ մինիմալ տրավմատիկություն [347-348]
4. համապաստասխան ՆԱՌ -ի ներպատիճային ֆիքսացիա

Կատարակտի ֆակոէմուլսիֆիկացիայի ժամանակ կատարվում են ստորև նշված էտապները.

1. համապատասխան չափի վիրաբուժական կտրվածք, որն ապահովում է առաջային խցիկի հիդրոդինամիկ ստաբիլությունը[349]
2. վիսկոէլասիկ նյութերի օգտագործումն էնդոթելի ադեկվատ պաշտպանության, անվտանգ միջամտության և առաջային խցիկի խորության պահպանման նպատակով[350]
3. կապսուլոռեքսիս[351], որն իրենից ներկայացնում է անընդհատ շրջանաձև կապսուլոտոմիա, հեշտացնում է հիդրոդիսեկցիան, կանխարգելում է հետին պատիճի վնասումը, որն առաջանում է առաջային պատիճի ռադիալ պատռվածքներից, հեշտացնում է ՆԱՌ -ի իմպլանտացիան, ֆիքսացիան, կենտրոնացումը պատիճի մեջ:Կապսուլոռեքսիսը, որի եզրերը ամբողջությամբ ծածկում են ՆԱՌ -ի եզրերը, խոչընդոտում է երկրորդային կատարակտի զարգացմանը՝ որոշ տեսակի ՆԱՌ -ների իմպլանտացիայի ժամանակ[352]
4. հիդրոդիսեկցիան[353] նվազեցնում է մեխանիկական սթրեսը ցինյան կապանների վրա՝ կորիզի և էպինուկլեուսի մոբիլիզացիայի արդյունքում: Այն նպաստում է կորտիկալ շերտերի ամբողջական ասպիարացիային, դանդաղեցնում է հետին կապսուլայի պղտորման զարգացումը[354,355]
5. կորիզի մասնատումն ու էմուլսիֆիկացիան այնպիսի մեթոդների կիրառմամբ ինչպիսիք են divide and conquer [356] կամ phaco chop թույլ են տալիս հեռացնել կորիզը կապսուլոռեքսիսի և փոքր վիրաբուժական կտրվածքի միջոցով[358]
6. էպինուկլեուսի և կորտիկալ շերտերի մանրակրկիտ հեռացում[346]

7. ՆԱՌ-ի իմպլանտացիա և ճիշտ կենտրոնացում վիրաբուժական փոքր կտրվածքի միջոցով կամ կապսուլայի բնույթին համապատասխան ՆԱՌ -ի անվտանգ ֆիքսացիա թարթչային ակոսում[69] (կարով կամ առանց կար[359]) կամ առաջային խցիկում
8. վիսկոէլաստիկ նյութերի լիարժեք հեռացում՝ հետվիրահատական շրջանում ներակնային ճնշման բարձրացման ռիսկը մինիմիզացնելու նպատակով[360]
9. վիրահատական կտրվածքի լիարժեք հերմետիզացիա կարերի միջոցով՝ այն դեպքում, երբ կտրվածքի չափը կամ ձևը չեն ապահովում անվտանգ, ինքնահերմետիզացվող կտրվածք[59,286,342,361,362]

Վիրահատական կտրվածքի տեղը, նրա չափսերն ու ձևը կախված են բազմաթիվ գործոններից, ինչպես օրինակ պացիենտի ակնակապճի անատոմիական առանձնահատկություններից, ներդրվող ՆԱՌ -ի տեսակից, առկա աստիգմատիզմից և դրա շտկման տակտիկայից, վիրաբույժի նախընտրությունից և փորձից: Այսպես օրինակ փոփոխելով կտրվածքի պարամետրերը և կենտրոնացնելով այն կոր մերիդիանում կարելի է նվազեցնել առկա աստիգմատիզմը:

Այսպիսով ելնելով բազմաթիվ պատճառներից սովորաբար նախընտրվում է փոքր կտրվածքով վիրաբուժությունը[366]: Ինքնահերմետիզացվող փոքր կտրվածքը հակված է ինքնաադապտացման, այնպես որ լիարժեք հերմետիզացիայի համար կարեր չեն պահանջվում: Այդպիսի վիրահատական կտրվածքը նաև հանդիսանում է ավելի հուսալի՝ վիրահատության ընթացքում պացիենտի կտրուկ շարժումների կամ ներվիրահատական սուպրախորիոիդալ արյունահոսության ժամանակ, այն նաև նվազեցնում է հետվիրահատական ֆիզիկական սահմանափակումների անհրաժեշտությունը: Փոքր կտրվածքը նաև ասոցացվում է ավելի քիչ արտահայտված հետվիրահատական բորբոքման հետ[367,368]: Եվ վերջապես փոքր կտրվածքը նվազագույն չափով է ինդուցում անցանկալի հետվիրահատական աստիգմատիզմը[366,369-373] և բնութագրվում է

ռեֆրակցիայի ստաբիլ ցուցանիշներով ինչպես վաղ անպես էլ ուշ հետվիրահատական շրջաններում[374-376]: Կատարակտի մանուալ էքստրակապսուլյար էքստրակցիան՝ լայն մուտքով կարող է հանդիսանալ հիմնավորված ընտրության մեթոդ բարդացած դեպքերում, ինչպիսիք են կարծր կորիզը, ցինյան կապանների թուլությունը և եղջերաթաղանթի դեկոմպենսացիայի բարձր ռիսկը:

Ներակնային ոսպնյակներ (ՆԱՌ)

Ներակնային ոսպնյակների իմպլանտացիան հանդիսանում է աֆակիայի կորեկցիայի մեթոդ՝ հակացուցումների բացակայության դեպքում[377]: Հետինխցիկային ՆԱՌ -ի իմպլանտացիան ոսպնյակի պատիճ մեծ մաս դեպքերում հանպիսանում է ամենաօպտիմալը[378]: Այսօր առկա է հետինխցիկային ՆԱՌ -ների լայն ընտրություն: ՆԱՌ -ի չափն ու ձևը օպտիկ և հապտիկ մասերի կոնֆիգուրացիան, եզրերի ձևը[379-382] նյութը, որից պատրաստված են օպտիկ և հապտիկ մասերը [383-385], քրոմատոֆորային կոմպոնենտը մշակված են տարբեր մոդիֆիկացիաներով:

Պոլիմեթիլմետակրիլատից պատրաստված կոշտ հետինխցիկային ՆԱՌ -ները ամենից հաճախ էին կիրառվում մինչև ծալվող մոդելների օգտագործումը: Այժմ ֆակոէմուլսիֆիկացիայի դեպքերի բացարձակ մեծամասնությունում օգտագործվում են ծալվող ՆԱՌ -ներ՝ փոքր կտրվածքով ներդրվելու հնարավորության շնորհիվ: Ծալվող ՆԱՌ -ները դասակարգվում են կախված օպտիկայի նյութից՝ սիլիկոնային, հիդրոֆիլ ակրիլ, հիդրոֆոբ ակրիլ, կոլագենային՝ հիդրօքսիէթիլմետակրիլատի հիմքի վրա ստեղծված սոպոլիմերներից (HEMA): Փաստորեն բոլոր ՆԱՌ -ները պարունակում են ուլտրամանուշակագույն ճառագայթներից պաշտպանող քրոմոֆորներ: <<Glisterings>> (փայլուն միկրովակուոլներ կամ <<փայլեր>>) դրանք հեղուկով լցված միկրովակուոլներ են, որոնք ձևավորվում են ՆԱՌ -ի օպտիկայում հեղուկ միջավայրում: Այս միկրովակուոլները պարունակվում են ՆԱՌ -ների բոլոր տեսակներում, սակայն ամենից հաճախ ասոցացվում են հիդրոֆոբ ակրիլային ոսպնյակների հետ: Չնայած նրան, որ տեսողական

ֆունկցիաների վրա միկրովակուոլների ազդեցության վերաբերյալ կարծիքները հակասական են, ՆԱՌ -ի էքսպալնացիան հազվադեպ է կատարվել[386]: Յուրաքանչյուր ՆԱՌ օժտված է դրական և բացասական բնութագրերով, ինչպիսիք են նյութը, ձևը և ֆիքսացիայի եղանակը: Վիրաբույժը պետք է պատկերացում ունենա յուրաքանչյուրի առանձնահատկությունների մասին:

Բոլոր ծավլող ՆԱՌ -ների դեպքում բջջային ռեակցիաները նվազագույնն են[387-389]: Ծավլող ՆԱՌ -ները կարող են իմպլանտացվել հատուկ պինցետների կամ ինժեկտորային համակարգի օգնությամբ[390-391]: Ինժեկտորային համակարգը հեշտացնում է ՆԱՌ -ի իմպլանտացիան փոքր կտրվածքի միջոցով: ՆԱՌ -ի ֆիքսացիան պատիճային պարկից դուրս կարող է անհրաժեշտ լինել ցինյան կապանների, ոսպնայի առաջային կամ հետին պատիճների վնասման ժամանակ: Ընտրության տարբերակ կարող են հանդիսանալ ՆԱՌ -ի իմպլանտացիան առաջային կամ հետին խցիկ՝ ցիլյար ակոսին ֆիքսման միջոցով[69,392-395]: Ադեկվատ պատիճային հենարանի բացակայության պայմաններում կատարվում է հետին խցիկային ՆԱՌ -ի կարով ֆիքսացիան ծիածանաթաղանթին կամ տրանսկլերալ[69,392-395]: ՆԱՌ -ի որոշակի առանձնահատկությունների դեպքում (օրինակ ակոմոդացիոն ՆԱՌ -ներ) իմպլանտացիան պիտի կատարվի միայն պատիճային պարկ: Հետին կապսուլայի վնասման դեպքում և ապակենաման խցիկում սիլիկոնային յուղի առկայության դեպքում սիլիկոնային ՆԱՌ -ի իմպլանտացիան կարող է նպաստել խորը միջավայրերի վատ տեսանելիությանը[70,71]: ՆԱՌ -ի առաջային տեղադրման ժամանակ (օրինակ՝ թարթչային ակոսում) անհրաժեշտ է նվազեցնել ՆԱՌ -ի ուժը 0.5 դիոպտրիայով: Քանի որ պարկից դուրս ՆԱՌ -ի ֆիքսացիայի դեպքում ավելանում է օպտիկ մասի թեքման և ապակենտրոնացման պոտենցիալ ռիսկը, անհրաժեշտ է վերանայել մուլտիֆոկալ ՆԱՌ -ների իմպլանտացիան կամ իմպլանտացնել բացասական սֆերիկ աբերացիաների բարձր ցուցանիշով ՆԱՌ-ներ[74,75,76]: Վիրաբուժական ռիկսկը ծիածանաթաղանթին կամ տրանսկլերալ ֆիքսացիայի ժամանակ կապված է

ոչ ճիշտ անատոմիական տեղակայման և կարերի անլիարժեքության հետ[396-400]:

Օպտիկա և ռեֆրակցիա

Աֆերիկ ՆԱՌ -ները բնութագրվում են սֆերիկ աբերացիաների առկայությամբ, քանի որ ՆԱՌ -ի եզրերով անցնող ճառագայթները ֆոկուսավորվում են պրոքսիմալ՝ պարաքսիալների նկատմամբ:

Ասֆերիկ ՆԱՌ -ների ձևը թույլ է տալիս նվազեցնել կամ վերացնել աչքի սֆերիկ աբերացիաները: Որոշ հետազոտությունների արդյունքներ ցուցադրում են կոնտրաստային զգացողության ցուցանիշների տարբեր աստիճանի լավացումը ասֆերիկ ՆԱՌ -ները կիրառման դեքում՝ համեմատած սֆերիկների հետ[46,401-413]: Սակայն ասֆերիկ ՆԱՌ -ների հնարավոր պոտենցյալ առավելությունները մնում են վիճարկելի հատկապես ֆունկցիոնալ բնութագրերի[414-416] և ֆոկուսի խորության հարցերում[188,417]: Պոտենցյալ առավելությունները և թերությունները կախված են բբի չափսերից[418], թեքության առկայությունից[419], ՆԱՌ -ի ապակենտրոնացումից[75] և ՆԱՌ -ի սֆերիկ աբերացիաների ու պացիենտի եղջերաթաղանթի համապատասխանությունից:

Եղջերաթաղանթային աստիգմատիզմի դեպքում տորիկ ՆԱՌ -ները նվազեցնում են պացիենտի կախվածությունը ակնոցային կորեկցիայից: Կատարակտով պացիենտի կերատոմետրիան ցույց է տվել որ 15-29% դեպքերում առկա է 1.5 դիոպտրիայից ավելի աստիգմատիզմ[422-423]: Նաև հայտանբերվել է որ տորիկ ՆԱՌ -ները համեմատած ոչ տորիկ մոնոֆոկալ ՆԱՌ -ների հետ նվազեցնում են ակնոցներից կախվածությունը[424-425]: Տորիկ ՆԱՌ -ները ի տարբերություն ինցիզիոն կերատոտոմիայի ապահովում են ավելի ստաբիլ ռեֆրակցիա[426-427]: Տորիկ ՆԱՌ -ների առավել բարձր էֆեկտիվություն ապահովելու համար անհրաժեշտ է աչքի

աքսիալ առացքի և կերատոմետրիկ ցոցանիշների ճշգրիտ չափում և ՆԱՈ -ի մանրակրկիտ կենտրոնացում[428]:

Մոնոտեստողությունը և ՆԱՈ -ի իմպլանտացիան, որոնք նախատեսված են պրեսբիոպիայի կորեկցիայի համար կիրառվում են պացիենտի կյանքի որակը բարելավելու և վիրահատությունից հետո ակնոցային կորեկցիայից կախվածությունը վերացնելու նպատակով[429]: Վիրաբույժը պետք է հաշվի առնի պացիենտի ապրելակերպը և նրա սպասումները ՆԱՈ -ի ճիշտ ընտրության համար: Պացիենտները պետք է ինֆորմացված լինեն ՆԱՈ -ի ընտրության մասին[430-431]: Չռանդոմիզացված հետազոտության շրջանակներում բիլատերալ մուլտիֆոկալ ՆԱՈ -ներով պացիենտները համեմատվել են բիլատերալ մոնոֆոկալ ՆԱՈ -ներով պացիենտների հետ (որոնք հաշվարկված են մոնոտեստության համար): Տվյալ հետազոտության ժամանակ էական տարբերություն չի գրանցվել վերջիններիս միջև[433]: Այս ստրատեգիային առավել համապատասխան են այն պացիենտները որոնք անամնեզում ունեն էֆեկտիվ մոնոտեստողություն[434,435]:

Կոկրեյնյան համակարգային հետազոտությունը ցույց է տալիս, որ մուլտիֆոկալ ՆԱՈ -ները էֆեկտիվ են մոտիկի տեսողության կորեկցիայի ժամանակ, այն դեպքում երբ չկորեկցված հեռվի տեսողության սրությունը չի տարբերվում մուլտիֆոկալ և մոնոֆոկալ ՆԱՈ -ների դեպքում:

Ակոմոդացիոն ՆԱՈ -ները, բացի իրենց բնորոշ ակոմոդացիոն հնարավորություններից օժտված են նաև կոնտրաստային զգայունությամբ[439,440]:

Կատարակտի վիրաբուժության բարդություններ

Չնայած նրան, որ գոյություն ունեն կատարակտի բազմաթիվ բարդություններ նրանք, որոնք կարող են բերել անդրաձելի կուրությանը հանդիպում են հազվադեպ: Տեսողության կորստի համար պոտենցիալ վտանգ են ներկայացնում ինֆեկցիոն էնդոֆթալմիտը, աչքի առաջային հատվածի

տորքսիկ համախտանիշը, ներվիրահատական էքսպոզիվ արյունահոսությունը, մակուլայի կիստոզ ալտուցը, ցանցաթաղանթի շերտազատումը, եղջերաթաղանթի պերսիստոզ ալտուցը և ՆԱՌ -ի դիսլոկացիան:

The Cataract Patient Outcomes Research Team-ը համեմատել է ֆակոէմուլսիֆիկացիայի և կատարակտայի էքստրակապսուլյար էքստրակցիայի բարդությունների հաճախականությունը, որոնց հարաբերությունը եղել է 2:1-ի [456]: Greenberg-ը և համահեղինակները [457] հետազոտել են հաճախականությունը այն պացիենտների մոտ, որոնք վիրահատվել են կատարակտայի կապացությամբ 2005-2007թթ ընկած ժամանակահատվածում: Առավել հաճախ նկատվում էր հետին կապսուլայի պատռվածքը, առաջային վիրահատման կամ նրանց կոմբինացիան (3,5%), երկրորդային կատարակտի առաջացումը (4.2%), մակուլայի կիստոզ ալտուցը (3,3%) և ոսպնյակային զանգվածների առկայությունը (1,7%):

Շթեյնը և համահեղինակները [458] բաժանել են կատարակտի կապացությանը վիրահատված պացիենտներին 3 խմբի. 1994-1995թթ, 1999-2000թթ, 2005-2006թթ՝ առաջնային վիրահատվածներ: Մեկ տարվա ընթացքում ծանր բարդությունների զարգացման հաճախականությունը կազմել է 0,5%, դրանց թվում էնդոֆթալմիտը՝ 0.16%, էքսպոզիվ արյունահոսությունը՝ 0.6%, ցանցաթաղանթի շերտազատումը՝ 0.26%:

Համաձայն Միացյալ Թագավորությունում կատարված հետազոտության արդյունքների ֆակոէմուլսիֆիկացիայից հետո զարգացած բարդությունների հաճախականությունը 8,7% է [459]: Ծանր բարդությունների հաճախականությունը կազմել է 2.4%՝ ապակենման մարմնի արտանկումը 1,1%, ոսպնյակի հոտախախտը ապակենման մարմին 0,1%,

ծիածանաթաղանթի վնասումը 1.2%, ցանցաթաղանթի շերտազատումը 0,2% և էնդոֆթալմիտը 0.1% ներառյալ:Թեթև բարդություններին են պատկանում վերքի ֆիլտրացիան 1,1%, եղջերաթաղանթի երկարատև այտուցը 0.7%, ուվեիտը 1,1 %,ներակնային ճնշման կայուն բարձրացում 0,3 %:

Ուղեկցող ակնային հիվանդություններ

Այնպիսի համակարգային հիվանդությունների առկայությունը, ինչպիսիք են շաքարային դիաբետը, թոքային դիսֆունկցիաները, սիրտանոթային դիսֆունկցիաները (օրինակ՝ դժվար կարգավորվող զարկերակային ճնշում, դեկոմպենսացված սրտային անբավարարություն), հենաշարժական համակարգի խանգարումները և դրա հետ կապված որոշակի դիրք ընդունելու դժվարությունները, տրեմորը, լսողության ծանր խանգարումները, անհանգիստ վիճակները,մտավոր հետամնացությունը,դեմենցիան, կոագուլոպաթիաները կարող են իրենց ազդեցությունն ունենալ վիրահատության ժամանակ [614,615]: Ատոնիկ ծիածանաթաղանթի առկայությունը կապում են ալֆա-1 անտագոնիստների օգտագործման հետ, որոնք հիմնականում նշանակվում են շագանակագեղձի բարորակ հիպերպլազիաների բուժման նպատակով [35,36]: Ուրոլոգների Ամերիկյան Ասոցիացիայի կլինիկական ղեկավարությունը կատարակտի առիթով պլանային կարգով վիրահատվող տղամարդկանց շագանակագեղձի բարորակ հիպերպլազիաների բուժման նպատակով ալֆա-1 անտագոնիստների նշանակումը խորհուրդ է տալիս միայն կատարակտայի վիրահատումից հետո [616] : Անմիջապես վիրահատությունից առաջ ալֆա -1 անտագոնիստների նշանակման դադարեցումը չի կանխում ատոնիկ ծիածանաթաղանթի զարգացումը, որը կարող է առաջանալ նույնիսկ դեղորայքի ընդունման դադարեցումից երկար ժամանակ անց

[35-38,616]: Մի քանի ռետրոսպեկտիվ և պրոսպեկտիվ հետազոտությունների արդյունքներ վկայում են այն մասին , որ ատոնիկ ծիածանաթաղանթի սինդրոմը առաջանում և ավելի ծանր է ընթանում միայն որոշակի տեսակի ալֆա -1 անտագոնիստների՝տամսումոլիզինի կիրառման դեպքում , ի տարբերություն ոչ սելեկտիվ ալֆա-1 անտագոնիստների, որը հաստատվում է մետաանալիզով [40]:Ուղեկցող սոմատիկ հիվանդություններով պացիենտների բուժումը պետք է լինի պացիենտին բուժող թերապևտի հետ համաձայնեցված: Կախված պլանավորված անէսթեզիոլոգիական միջամտությունից և սեդացիայից, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ընդհանուր վիճակի ստաբիլիզացիայի և մոնիտորինգի համար :

Ապացույցներ, որոնք թույլ են տալիս միանշանակ խորհուրդ տալ հակակոագուլյանտային կամ հակաագրեգանտային թերապիայի շարունակումը կամ ընդհատումը կատարակտի վիրաբուժությունում գոյություն չունեն [618, 619] : Այդ դեղորայքների ընդհատումը սովորաբար կապված է ուղեկցող սոմատիկ հիվանդության հետ : Նոր կորոնար ստենտով պացիենտների մոտ կրկնակի հակաթրոմբոցիտար բուժման վաղաժամ դադարեցումը ասոցացվում է ստենտի թրոմբոզի զարգացման ռիսկի մեծացման հետ [620] : 19283 աչքերի տվյալների հետազոտությունների արդյունքները պացիենտների մոտ կատարակտի վիրահատությունից առաջ ցույց են տվել անբարենպաստ սոմատիկ և օֆթալմոլոգիական արդյունքների ցածր հաճախականության և ստատիկ հստակ տարբերությունների բացակայություն հակակոագուլյանտային ու հակաթրոմբոցիտար բուժման ինչպես շարունակման , այնպես էլ ընդհատման դեպքում [621]: Կատարակտի վիրահատությունից առաջ հակաթրոմբոցիտար և հակակոագուլյանտային բուժում ստացող պացիենտների մոտ մի քանի հետազոտությունների արդյունքներ ցույց են տալիս նվազագույն բարդություններ կամ դրանց բացակայություն [622-630]: Այնուամենայնիվ այդպիսի պացիենտների մոտ անհրաժեշտ է ռետրոբուլբար սրսկումները փոխարինել ալտերնատիվ տարբերակով [619] :

Ամերիկյան Սրտաբանական Ասոցիացիայի [631,632] և Ամերիկյան Օրթոպեդիկ Վիրաբույժների Ակադեմիայի կողմից հստակ երաշխավորագիրներ սրտի արհեստական փականներով և հոդերի պրոթեզներով պացիենտների (կատարակտի առումով պլանային կարգով վիրահատվող)մոտ համակարգային կանխարգելիչ հակաբակտերիալ բուժման վերաբերյալ գոյություն չունեն [633] :

Կոմբինացված վիրահատություն և միջամտություններ հատուկ դեպքերում

Կատարակտի և գլաուկոմայի վիրահատություն

Կատարակտի և գլաուկոմայի համադրման դեպքում վիրահատական բուժման տակտիկան կայանում է հետևյալ տարբերակների ընտրության մեջ՝ միայն կատարակտի վիրահատություն ՆԱՌ-ի տեղադրմամբ, գլաուկոմայի և կատարակտի կոմբինացված վիրահատություն, հակագլաուկոմատոզ վիրահատություն կատարակտի էքստրակցիայից հետո կամ կատարակտի վիրահատություն հակագլաուկոմատոզ վիրահատությունից հետո: Ընդ որում որպես հակագլաուկոմատոզ վիրահատություն կարող են լինել ինչպես ավանդական միջամտության տեսակները, ինչպիսին է տրաբեկուլեկտոմիան, այնպես էլ ֆիլտրացիան լավացնող միջամտությունները, դրենաժային սարքավորումների տեղադրումը կամ էնդոցիկլոֆոտոկոագուլացիան :

Կատարակտի վիրահատությունը ՆԱՌ-ի տեղադրմամբ կարող է նպաստել ՆԱՃ չափավոր իջեցմանը , հատկապես երբ ենթադրվում է կամ հաստատվում է առաջնային փակ անկյունային գլաուկոմա ախտորոշումը կամ սկզբնական/զարգացած գլաուկոմա ախտորոշումը (հիպոտենզիվ դեզորայքներով կոմպենսացված ՆԱՃ-ով) [48] :<եռազոտությունները ցույց են տվել , որ ՆԱՃ իջեցումը այնքան ավելի շատ է, ինչքան բարձր է եղել նրա մինչվիրահատական մակարդակը , իսկ հետվիրահատական արդյունքը կարող է մնալ կայուն մի քանի տարիների ընթացքում [41-44 ,47] :

Կոմբինացված ֆակտորաբեկուլէկտոմիան համարվում է անբավարար արդյունավետ եղանակ ՆԱՃ իջեցման առումով, ի տարբերություն գլաուկոմայի ինքնուրույն վիրահատության [48,675]: Ինչպես միակողմանի, այնպես էլ երկկողմանի միջամտությունները նպաստում են միևնույն չափով ՆԱՃ իջեցման [676] : Տրաբեկուլէկտոմիայի հետ կոմբինացված ֆակոէմուլսիֆիկացիան կարող է լիովին նպաստել ինչպես ՆԱՃ կարգավորմանը, այնպես էլ առավելագույն չափով կորեկցված տեսողության սրության բարձրացմանը՝ համեմատած մինչվիրահատական տեսողության հետ [677-679]: Մի շարք նոր հակագլաուկոմատոզ միջամտություններ կարող են կոմբինացվել կատարակտի էքստրակցիայի հետ : Դա ներառում է կանալոպլաստիկան [680], տրաբեկուլէկտոմիան ab interno [681] , էնդոցիկլոֆոտոկոագուլյացիան [682] և շրջանցող տրաբեկուլյար միկրոստենտերի տեղադրումը ab interno [683] , որոնք տեղադրվում են կատարակտայի էքստրակցիայի պահին : Գլաուկոմայի վիրահատության նոր եղանակները ի տարբերություն հակամետաբոլիտների կիրառմամբ ավանդական ֆիստուլավորող եղանակների նվազեցնում են հիպոտոնիայի և ֆիլտրացիոն բարձիկի հետ կապված բարդությունների առաջացման հնարավորությունը , սակայն ՆԱՃ իջեցնում են անբավարար չափով [45, 684] :

Կոմբինացված վիրահատության (կատարակտի էքստրակցիա ՆԱՌ-ի տեղադրմամբ և տրաբեկուլէկտոմիա) հնարավոր առավելություններից են՝ ՆԱՃ կտրուկ բարձրացման կանխումը վաղ հետվիրահատական շրջանում և երկարատև հիպոտենզիվ էֆֆեկտը մեկ միջամտության արդյունքում [48] :

Չնայած նրան , որ սա ցուցված է ուվեիտով , նեովասկուլյարիզացիայով և առաջային հատվածի բազմաթիվ պաթոլոգիաներով պացիենտներին , գոյություն ունեն մինչ կատարակտայի էքստրակցիան մեկ էտապով ֆիլտրացիոն վիրահատության իրականացման մի քանի թերություններ : Դա կապված է հարվիրահատական և անէսթեզիոլոգիական վտանգների առաջացման հավանականության մեծացման հետ, ինչպես նաև հիպոտենզիվ արդյունքի հնարավոր կորստի հետ կատարակտայի հեռացումից հետո :

Լրացուցիչ հակաֆիբրոզ թերապիայի (Միտոմիցին C, 5-ֆտորուրացիլ) առավելությունները կոմբինացված ֆակտորաբեկուլէկտոմիայի ժամանակ ֆիլտրացիոն “բարձիկի “ անկայունության կանխարգելման նպատակով մնում են վիճելի : Համարվում է, որ Միտոմիցին C- ի օգտագործումը կոմբինացված վիրահատության դեպքում ավելի լավ է իջեցնում ՆԱՃ և նպաստում երկարատև հիպոտենզիվ արդյունքին , սակայն դա չի վերաբերվում 5-ֆտորուրացիլ-ի կիրառմանը [49 ,675, 685] :Հակաֆիբրոզ թերապիայի կիրառման հարցում պետք է հաշվի առնել տեսողությանը վտանգ սպառնացող այնպիսի բարդությունների առաջացումը , ինչպիսիք են `էնդօֆթալմիտը , կապված ֆիլտրացիոն “բարձիկի” բացման հետ [686-688] , քրոնիկ հիպոտոնիան մակուլոպաթիայով [689, 690] և արտաքին ֆիլտրացիան հեռակա հատվածներում :

Վիրահատական միջամտության ընտրության հարցում պետք է նաև հաշվի առնել պացիենտի անհատական պատասխան ռեակցիան դեղորայքային թերապիայի և գլաուկոմայի լազերային բուժման նկատմամբ , տեսողական նյարդաթելերի ախտահարման աստիճանը ,տեսադաշտի փոփոխությունները , կատարակտայի արտահայտվածությունը և վիրաբույժի ունակությունները :

Կատարակտի վիրահատություն և կերաթոպլաստիկա

Էնդոթելիալ դիստրոֆիայի առկայության դեպքում կանխորոշել եղջերաթաղանթի վիճակը կատարակտայի վիրահատությունից հետո վիրաբույժի համար կարող է իրենից ներկայացնել որոշակի դժվարություններ : Վիրահատությունից առաջ Էնդոթելի վիճակի գնահատումը կօգնի վիրաբույժին ճիշտ գնահատել իրավիճակը : Կատարակտայի վիրահատությունից հետո եղջերաթաղանթի դեկոմպենսացիայի հնարավոր ռիսկի գործոններից են` միկրոկիստոզ այտուցը կամ բիոմիկրոսկոպիայով հայտնաբերվող եղջերաթաղանթի ստրոմայի հաստացումը , եղջերաթաղանթի պախիմետրիկ հաստությունը կենտրոնում `> 640 միկրոն [578] , Էնդոթելիալ միկրոսկոպիայիվ հայտնաբերվող Էնդոթելիալ բջիջների անբավարար

քանակություն : Տեսողության շարունակական պղտորումները առավոտյան անմիջապես արթնանալուց հետո հաճախ խոսում են էնդոթելիալ դիսֆունկցիայի մասին : Եթե քնի ժամանակ անբավարար գոլորշացումը հանգեցնում է եղջերաթաղանթի սիմպտոմատիկ այտուցի , ապա կատարակտի վիրահատությունից հետո եղջերաթաղանթի դեկոմպենսացիայի հավանականությունը լինում է բարձր : Այդ դեպքում պետք է հաշվի առնել կատարակտի կոմբինացված վիրահատության հնարավորությունը ՆԱՌ-ի տեղադրմամբ ` կերատոպլաստիկայի հետ միաժամանակ : Էնդոթելի սահմանային վիճակների դեպքում ավելի ծայրամասային վիրաբուժական կտրվածքները, տեմպորալ մուտքը, կորնեոսկլերալ կտրվածքը և առաջային խցիկ վիսկոէլաստիկների ավելի հաճախակի ներմուծումները օգնում են պահպանել էնդոթելիալ բջիջների էլ ավելի մեծ քանակ [692] :

Կերատոպլաստիկայի հետ կատարակտի կոմբինացված վիրահատությունը, նույնիսկ փափուկ կատարակտի առկայության դեպքում , նախընտրելի է մի քանի պատճառներով`

- Եղջերաթաղանթի փոխպատվաստումից հետո կատարակտան կարող է սկսել զարգանալ արագ տեմպերով :
- Վիրահատությունից հետո կորտիկոստերոիդների կիրառումը արագացնում է հետին կապսուլյար կատարակտայի զարգացումը :
- Գոյություն ունի եղջերաթաղանթի փոխպատվաստի վնասման հավանականություն կատարակտի հաջորդող վիրահատության ժամանակ:
- Վիրահատական բուժումը սահմանափակվում է միայն մեկ վիրահատական միջամտությամբ :
- Ավելի արագ ֆուկնցիոնալ ռեաբիլիտացիա :

Հատուկ գունանյութերի օգտագործումը առաջային կապսուլայի ներկման համար կատարակտի կոմբինացված վիրահատության և կերատոպլաստիկայի ժամանակ օգնում է կապսուլոռեքսիսի իրականացումը դարձնել ավելի անվտանգ [693]:

Քանի որ եղջերաթաղանթի փոխպատվաստի վերջնական կերատոմետրիկ ցուցանիշները հնարավոր չի կանխատեսել ,ՆԱՌ-ի ուժի հաշվարկը դժվարացած է:

Այդ իսկ պատճառով որոշ վիրաբույժներ առաջին փուլում նախընտրում են կատարել թափանցող կերատոպլաստիկա , իսկ եղջերաթաղանթի փոխպատվաստի կայունացումից հետո՝ կատարակտայի էքստրակցիա : ՆԱՌ-ի ուժը և ռեֆրակցիոն արդյունքը կլինեն ավելի կանխատեսելի են, եթե կատարակտի վիրահատությունը հետաձգել մինչև կերատոմետրիկ ցուցանիշների կայունացումը կարերի հեռացումից հետո [695-697]: Նման դեպքերում այս քայլը արդարացվում է նաև նրանով , որ կերատոպլաստիկայի ժամանակ կրճատվում է “ բաց աչքի “ տևողությունը : Նման լուծումը արդարացված է նաև խորը առաջային շերտավոր կերատոպլաստիկայի դեպքում :

Էնդոթելիալ անբավարարության բուժման համար թափանցող կերատոպլաստիկայի այլընտրանքային տարբերակներ են հանդիսանում էնդոթելի և ստրոմայի խորանիստ շերտերի փոխպատվաստումը կամ դեսցեմենտյան թաղանթի փոխպատվաստումը եղջերաթաղանթի էնդոթելիալ շերտի հետ միասին [698-699] : Այս միջամտությունները կարելի է զուգակցել ֆակոէմուլսիֆիկացիայի և ՆԱՌ-ի տեղադրման հետ : Բացի նմանատիպ առավելություններից այս մեթոդը չի փոխում եղջերաթաղանթի առաջային մակերեսի կորությունը ,ինչը ՆԱՌ-ի հաշվարկը դարձնում է կանխատեսելի , ի տարբերություն կոմբինացված թափանցող կերատոպլաստիկայի և կատարակտի էքստրակցիայի մեթոդի: Ինչպես ցույց են տալիս OCT և Schiempflug imaging տվյալները ` էնդոթելիալ շերտի հետ միասին փոխպատվաստված դեսցեմենտյան թաղանթի շերտազատումը (Descemet's stripping endothelial keratoplasty –DSEK) կարող է առաջացնել ռեֆրակցիայի մի փոքր տեղաշարժ դեպի հիպերմետրոպիա , փոխելով եղջերաթաղանթի հետին մակերեսի կոնֆիգուրացիան : Չնայած նրան , որ դա ժամանակի հետ նվազում է , ռեֆրակցիայի տեղաշարժը դեպի հիպերմետրոպիա (մոտ +0,6 դպտր 12 ամիս անց ` ըստ մի հետազոտության տվյալների [700] և +1,47 դպտր ըստ ուրիշ հետազոտության տվյալների [700, 701]) միշտ պետք է հաշվի առնել , հատկապես եթե գոյություն ունի կատարակտի վիրահատությունից հետո եղջերաթաղանթի դեկոմպենսացիայի վտանգ [700, 701] :

Ցավոք , ներկա պահին հետազոտությունները ռեֆրակցիայի հիպերմետրոպիկ տեղաշարժի նկատմամբ ցույց են տալիս մեծ վարիաբիություն : Մի հետազոտություն ցույց է տալիս եղջերաթաղանթի բեկող հատկության նվազեցում միջին հաշվով 1,94 դպտր –ի սահմաններում ի տարբերություն կոնտրոլ խմբի, իսկ ըստ այլ հետազոտությունների կատարակտայի և կերատոպլաստիկայի կոմբինացված վիրահատությունից հետո ռեֆրակցիոն արդյունքը տարբերվում էր կանխատեսելի արդյունքներից միջինում $+ 1, 63$ դպտր –ի սահմաններում (տվյալների ցրում $0 -4,0$ դպտր սահմաններում) [703] : Երրորդ հետազոտությունը ցույց է տվել հիպերմետրոպիկ տեղաշարժ $0,15$ դպտր սահմաններում , որը վիճակագրորեն չի տարբերվում մինչև վիրահատական ցուցանիշներից [704] :

Ստացված արդյունքների տարբերությունը ապացուցում է դրանց կախվածությունը եզջերաթաղանթի փոխպատվաստի հետին կոնֆիգուրացիայից ,այդ իսկ պատճառով լավ կլինի հաշվի առնել այդ առանձնահատկությունը ՆԱՌ-ի հաշվարկի ժամանակ եղջերաթաղանթի մասնագետի հետ միասին : Նման խնդիրներ ավելի քիչ էին պատահում դեսցեմենտյան թաղանթի և էնդոթելի փոխպատվաստման ժամանակ, որի դեպքում հիպերմետրոպիկ միջին տեղաշարժը կազմում է $0,49$ դպտր ($-1, 0$ -ից մինչև $+1,5$ դպտր) [705]:Եթե կերատոպլաստիկայի ցուցում հադիսանում է ոչ թե էնդոթելիալ դիստրոֆիան , այլ նրա կենտրոնական հատվածի պղտորումը , ապա վիրաբույժը կարող է դիմել սֆինկտերոտոմիայի , որը կարող է լավացնել վիրահատական դաշտի տեսանելիությունը [76] : Հատուկ գունանյութերի օգտագործումը կարող է եզջերաթաղանթի թեթև պղտորումների ժամանակ ավելի լավացնել տեսանելիությունը և անհրաժեշտ լինել կերատոպլաստիկայի համար վերջինիս սկզբունքային ցուցում լինելու դեպքում [707] :

Կատարակրի վիրահատություն և ուվեիտներ

Գոյություն ունեն մի շարք հարցեր , որոնք պետք է հաշվի առնել ուվեալ աչքերում կատարակտ վիրահատելիս [708, 709] :Առաջային հատվածի ակտիվ բորբոքային պրոցեսով պացիենտների մոտ կա հետվիրահատական բարդությունների առաջացման մեծ հավանականություն :Դա հատկապես վերաբերվում է առաջային և միջանկյալ ուվեիտով պացիենտներին :Ամենահաճախ հանդիպող խնդիրը , որը հատկապես կարող է ծագել ծիածանաթաղանթի ներվիրահատական վնասումների և հետին մեծ կալումների առկայության պարագայում, դա ծիածանաթաղանթի և ոսպնյակի պատիճի միջև կալումների գոյացումն է հետվիրահատական շրջանում :Կարող են հադիպել նաև ֆիբրինային թաղանթներ , պրեցիպիտատներ ՆԱՌ-ի վրա, ցինյան կապանների թուլություն և ՄԿԱ :

Ուվեիտով պացիենտների մոտ կատարակտի վիրահատության համար օպտիմալ ժամանակի ընտրությունը կախված է մի շարք գործոններից :Բորբոքային պրոցեսը պետք է գտնվի ռեմիսիայի շրջանում կամ մաքսիմալ սահմանափակված լինի մինչև վիրահատությունը [605] :Նույնիկ եթե պացիենտներն մշտական ընդունում են հակաբորբոքային դեղորայք , միևնույնն է անհրաժեշտ է ընդունել տեղային կամ պերօրալ կորտիկոստերոիդներ անմիջապես վիրահատությունից առաջ : Անցկացրած հետազոտության տվյալները, ցույց են տալիս, որ նախավիրահատական պերօրալ հորմոնաթերապիան կարող է նվազեցնել ՄԿԱ-ի առաջացման հավանականությունը հետվիրահատական շրջանում [710]: Դեղորայքային ռեժիմը պետք է կարգավորել ըստ հիվանդության ծանրության աստիճանի , ուվեիտի վերջին սրացման հետևանքների և նախկինում ուվեիտի սրացումների սահմանափակման համար անհրաժեշտ ջանքերի : Վիրահատական միջամտությունը պլանավորելիս պետք է հաշվի առնել լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը , որոնք հաճախ պետք է լինում անցկացնել ուվեիտի բարդությունների պատճառով, օրինակ `երկրորդային գլաուկոմա : Կարող է պահանջվել վիրահատական միջամտության ընթացքի փոփոխություն այնպիսի խնդիրների հետ կապված ,ինչպիսիք են `հետին կալումների ,բբային թաղանթների և ծիածանաթաղանթի բբային եզրում ֆիբրոզ փոփոխությունների առկայությունը :

Ուվեիտով պացիենտների մոտ ՆԱՌ-ի տեղադրման անվտանգության հարցը այսօրվա դրությամբ չի ենթարկվում կասկածների : ՆԱՌ-ի նյութը բորբոքային պրոցեսի վրա էական ազդեցություն չի թողնում : ՆԱՌ-ի հետ կապված բարդություններին են պատկանում ՆԱՌ-ի վրա բորբոքային նստվածքը , մակերեսային թաղանթների ձևավորումը և ոսպնյակի պատիճի հետ կապված բարդությունները՝ պայմանավորված բորբոքային պրոցեսով, որոնք կարող են դառնալ ՆԱՌ-ի տեղաշարժի պատճառ : Աֆակիան կարող է լինել նախընտրելի ուվեիտի այնպիսի հետևանքների դեպքում , ինչպիսիք են ` ցիլիար կամ բբային թաղանթների ձևավորումը, կայուն բորբոքման նշանները (հիպոտոնիա , արտահայտված պղտորում) : Հիմնականում նախընտրելի է ՆԱՌ-ի տեղադրումը կապսուլյար պարկի մեջ, սակայն ՆԱՌ-ի ֆիքսացիան ցիլիար ակոսի մեջ կանխում է իրիդոկապսուլյար կպումների առաջացումը , հատկապես, երբ առկա են լինում ծիածանաթաղանթի լուրջ վնասումներ, հետին կպումներ : Ապացուցված է , որ նման մոտեցումը չի վատթարացնում հետվիրահատական բորբոքման վիճակը [601] : ՆԱՌ-ի ինտրակապսուլյար տեղադրումը կապսուլոռեքսիսի մեծ տրամագծի դեպքում ևս կարող է նպաստել առաջային պատիճի հետ հետվիրահատական կպումների ձևավորման հավանականության փոքրացմանը : Առաջխցիկային ՆԱՌ-ի օգտագործումը կարող է ավելի ակտիվացնել բորբոքային պրոցեսը և առաջային խցիկի անկյան պաթոլոգիաների դեպքում լինել անցանկալի :

Չնայած նրան , որ ուվեալ աչքերում բիբը լայնանում է դժվարությամբ , անհրաժեշտ է խուսափել ծիածանաթաղանթի հետ կապված միջամտություններից, քանի որ դա կարող է ակտիվացնել բորբոքային պրոցեսը և նպաստել նոր հետին կպումների ձևավորմանը : Հետվիրահատական շրջանում կարճատև ազդեցության միդրիատիկների ինստիլյացիաները կարող են կանխել կպումների առաջացումը , իսկ երկարատև ազդեցության միդրիատիկները՝ (օրինակ ` ատրոպին) կպումների ձևավորմանը լայն բբի պայմաններում: Արդյունավետ է նաև լրացուցիչ ներվիրահատական հորմոնաթերապիան կորտիկոստերոիդներով (ներերակային, պերիօկուլյար , ինտրաօկուլյար) : Սովորաբար հետվիրահատական շրջանում ուվեալ աչքերին անհրաժեշտ է կորտիկոստերոիդների ինստիլյացիաների ավելի մեծ հաճախականություն և երկարատևություն , ավելի հետևողական հսկողություն ,

այնպիսի բարդությունների կանխարգելման համար, ինչպիսիք են ՝ ծանր ուվեիտը, երկրորդային գլաուկոման , հետին կալումները ,երկրորդային թաղանթները և ՄԿԱ [711] :

